

CHRISTMAS EXPO 2003
ՏՈՒՆՆԻ ԵՒ ՏՈՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՎԱԼՆԵՐ
 21 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր, ամեն օր
 կ. Ե. Ժամը 4:00-ն երեկոյան Ժամը 10:00
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ
ԲԱԶՄԱԹԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ՀՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ
 Ռուսական քրիստոսական ցուցասրահին
 և Beauty Home Galleryին
Expo Beirut Aln-El-Mreisseh
 Tel.: 01 - 361040

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE جريدة يومية سياسية وأدبية - اليوم السابع - إيشاد ورويشان
 1500 Լ.Ո. 76ԳՎ ՏԱՐԻ, ԹԻԻ 222 (21564) ԵՐԵՎԱՆԻ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

ՄԱԿԻ ԿԵԴՐՈՆԱՍՏԵՂԻՆ
ՄԷՁ ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՐ
 ՄԱԿԻ կեդրոնատեղիին մէջ, Նիւ Եորք, ապահովութեան ուժերու անդամի մը դիակը գտնուած է երէկ:
 Ըստ համաձայն քաղաքի ոստիկանութեան, շատ հաւանաբար արարքը անձնասպանութեան մը հետեւանքը կրնայ ըլլալ, թէեւ հարցին գծով հետաքննութիւնները կը շարունակուին եւ ցարդ պաշտօնական ոչ մէկ յայտարարութիւն կատարուած է:
 (ԱՅՓ)

ԽԱՐԹՈՒՄԻ ՄԷՁ

ՊԵՐՐԻ ՍՈՒՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՄՊԻՈՆԵՆ ԴՐՈՒԱՏԵՑ ՍՈՒՐԻԱՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի երէկ Խարթումի մէջ հանդիպում մը ունեցաւ Սուտանի նախագահ Օմար Հասան Պաշիբի հետ: Ներկայ գտնուեցան նաեւ Պերրիի ընկերակցող խորհրդարանական պատուիրակութիւնը եւ Սուտանի խորհրդարանի նախագահ Ահմետ Իպրահիմ Թահեր:

Նախագահ Պաշիբի դրուատեց եւ արժեւորեց Պերրիի կատարած պաշտօնական այցելութիւնը, որուն իրեն արդիւնք պիտի ամրապնդուին Լիբանան - Սուտան երկկողմանի յարաբերութիւնները: Ան դրուատեց շրջանին մէջ Լիբանանի դերակատարութիւնը, մանաւանդ Լիբանանի Դիմադրութեան կարեւորութիւնը, յատկապէս հարաւային Լիբանանի բռնագրաւուած հողերու պատագրման անհրաժեշտութիւնը:

Հանդիպումին քննարկուի առարկայ դարձան նաեւ շրջանային իրադարձութիւնները, յատկապէս պաղեստինեւիսրայիլեան տագնապը:

Միւս կողմէ, Պերրի երէկ այցելեց նաեւ Սուտանի խորհրդարան, ուր դիմաւորուեցաւ Թահերի կողմէ:

Պերրի խորհրդարանին մէջ (ուր կը գումարէր լիագումար նիստ) արտասանած իր խօսքին մէջ շեշտեց, որ Լիբանան մտեցած էր պառակտուելու եւ տարբեր Խորայիլներ պիտի հիմնուէին հոն, եթէ Սուրիա իր օժանդակ քաջուկը չտրամադրէր Լիբանանի: Ան վեր առաւ նաեւ Լիբանանի ժողովուրդին քաջութիւնը:

Պերրի դիտել տուաւ, որ Սուտան կրնայ իր դիրքով արաբական եւ ափրիկեան իր շրջանակին մէջ աշխատիլ կազմելու համար միջազգային հանրային կարծիք մը, որ մերժէ ու դատապարտէ Խորայիլի կողմէ Պաղեստինի, Լիբանանի ու Սուրիոյ դէմ գործադրուող բռնարարքները:

Պերրի խօսելու քննադատեց ամերիկեան Քոնկրէսին վաւերացուցած Սուրիան հաշուետուութեան կանչելու օրինագիծը, կոչ ուղղելով արաբ խորհրդարանականներուն՝ պաշտպանելու արաբական բոլոր երկիրներու ժողովրդավարութիւնը:

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

ԺԸՆԵՒԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԵՑԱՒ


Իսրայիլացի ընդդիմադիր ղեկավարներ եւ պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատարներ երէկ Ժընեւի մէջ յայտարարեցին խաղաղութեան ծրագիր մը, որ ծանօթ է Ժընեւի նախաձեռնութիւն անուամբ:

Նախաձեռնութիւնը, որ գաղտնօրէն մշակուած էր պաղեստինցի եւ իսրայիլացի պատասխանատուներու կողմէ, կը բովանդակէ առաջարկներ, որոնք կրնան լուծել պաղեստինեւիսրայիլեան տագնապի ամենէն փշոտ հարցերը, որոնց կարգին են պաղեստինեան անկախ պետութիւնն ու Երուսաղէմի ապագայ իրավիճակը:

Յիշեալ նախաձեռնութիւնը սակայն առաջին օրէն իսկ մերժուեցաւ Իսրայիլի վարչապետ Արիէլ Շարոնի կողմէ, որ ծրագիրը դատապարտեց, իբրեւ վտանգաւոր ձեռնարկութիւն մը:

Պաղեստինեան իշխանութիւնն այ գաղջ փորակցութիւն մը տուած էր ծրագիրին:

Պաղեստինցի նախկին նախարար Եասէր Ապտ Ռապպո եւ իսրայիլացի նախկին նախարար Եոսի Պէլլի կը նկատուին գլխաւոր մշակողները խաղաղութեան ծրագիրին: Ապտ Ռապպո երէկ հանդիսութեան անաչք ըսաւ, որ սակայն առաջին քայլն է երկար ձեռքով մը վրայ: Ան աւելցուց, որ ժընեւի նախաձեռնութիւնը եւ անոր ապահոված շրջանային ու միջազգային կորակցութիւնը ցոյց կու տայ, թէ պաղեստինցիներուն ու իսրայիլացիներուն



Պէլլի (ձախից) եւ Ապտ Ռապպո

մեծամասնութիւնը խաղաղութիւն կ'ուզէ: Ռապպո անտեսեց այն տեսակետները, ըստ որոնց՝ Ժընեւի նախաձեռնութիւնը իրապաշտ չէ:

Իսրայիլացի անձնաւորութիւններ իրենց կարգին կարեւորութիւն չտուին Շարոնի մերժողական կեցուածքին: Անոնք կ'ըսեն, որ իսրայիլեան ընկերութեան պանապան թելերու ներկայութիւնը Ժընեւի կը փաստէ, թէ ծրագիրը ժողովրդականութիւնը կը վայելէ: «Եթէ կատարութիւնը հոս ներկայ չէ ժողովուրդին համար, թող ժողովուրդը ներկայ ըլլայ ժողովուրդին համար», ըսաւ խորհրդարանի նախկին նախագահ Ապրահամ Պրլկ:

Ժընեւի նախաձեռնութեան հանդէպ միջազգային պորակցութիւնն արտայայտեցին ակնկալ քան 58 ղեկավարներ, որոնք երէկ հրապարակեցին զրաւոր կոչ մը՝ պահանջելով պորակցութիւն նախաձեռնութեան: Անոնք կոչ ուղղեցին

յատկապէս խաղաղութեան ձեռքով քարտէսը հովանաւորող քառակնին, որ զօրավիզ կանգնի այս նախաձեռնութեան: Կոչը ստորագրողներու կարգին էին Միացեալ Նահանգներու նախկին նախագահ Ճիմի Բարքըր, խորհրդային նախկին ղեկավար Միխայիլ Գորբաչով, ՄԱԿի նախկին ընդհանուր քարտուղար Պուրոու Չալի եւ ուրիշներ:

Եգիպտոսի նախագահ Հիսսի Մուպարաբ Գահիբէի մէջ ըսաւ, որ զօրավիզ կը կանգնի որեւէ ծրագիր, որ Միջին Արեւելքը խաղաղութեան եւ կայունութեան կ'առաջնորդէ:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ իր կողմէ ներկայացուցի մը ուղարկած էր Ժընեւի ներկայ ըլլալու համար ծրագիրին պաշտօնական հրապարակումին: Արաֆատի ներկայացուցիչն է Ժիպրիլ Ռաժուպ:

(ԱՅՓ)

Ս. ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ՄԷՁ

ՓՈՒԹԻՆ - ՔՈՉԱՐԵԱՆ «ԱՌԱՆՅ ՓՈՂԿԱՊՆԵՐՈՒ» ՀԱՆԴԻՊՈՒՄ



Ս. Փեթերսպուրկի մէջ Նոյեմբեր 30ին կայացաւ Հայաստանի եւ Ռուսիոյ նախագահներ Ռուպերթ Քոչարեանի եւ Վլատիմիր Փութինի հանդիպումը, որուն առանցքը կազմեցին Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացը եւ տնտեսական համագործակցութեան ծրագիրները:

Շար.ը՝ էջ 10

Հ. Յ. Գ. ԲԻՐՈՅԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՄԷՁ

Պաշտօնական հրաւերով չորսօրեայ այցելութեամբ մը Իրան գտնուող Հ. Յ. Գ. Բիրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանդ Մարաթեանն է Հ. Յ. Գ. Բիրոյի անդամ ընկ. Ալպէր Աճէմեան Թեհրանի մէջ Նոյեմբեր 30ին հանդիպում ունեցած են Իրանի արտաքին գործոց նախարարութեան ԱՊՀԻ երկիրներու բաժանմունքի պատասխանատու Սեհտի Սաֆարիի հետ:

Քննարկուեցան Հայաստանի եւ Իրանի յարաբերութիւններու տարբեր մարզերուն առընչուող հարցեր: Կողմերը արծարծեցին նաեւ շրջանային կացութեան առընչուող խնդիրներ: Անոնք յատկապէս անդրադարձան Հայաստան - Իրան հաղորդակցական եւ տնտեսաքաղաքական յարաբերութիւններուն:

ՆԱԽԿԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՌՈՒԲԵՆ ԳԵՌՐԳԵԱՆ ԶԵՐԲԱՎԱԼՈՒԱԾ

Երէկ Երեւանի մէջ ձեռքարկուեցաւ Հայաստանի Ազգային Ժողովի նախկին պատգամաւոր Ռուբեն Գեորգեան: Զերբակալման պատճառը Ազգային Ժողովի պատգամաւոր գործարար Սամուէլ Ալեքսանեանի դէմ մահափորձի անբաստանութիւնն է: Ըստ հրապարակուած տեղեկութիւններուն, իրաւապահ մարմիններ կրցած են ունկնդրել Գեորգեանի հեռաձայնային վրոյցները:

Այս տարին Յունիս 25ին սպաննուած էր Ռուբեն Գեորգեանի եղբորորդին: Այս առընչութեամբ արդէն իսկ կայանքի տակ կը գտնուին քանի մը հոգի, որոնք յայտնի են իբրեւ Սամուէլ Ալեքսանեանի մօտիկ անձեր:

Ոստիկանութիւնը երէկ հաստատելով Ռուբեն Գեորգեանի ձեռքարկուած լուրը, նշեց, որ ան կը ծրագրէր սպանութիւնը կատարել «ականուած» բջիջային հեռաձայնի միջոցով: Անոր մօտ յայտնաբերուած են նման 3 սարքեր:

ՄԱՍՍՈՐԻԿԱԹԻ ՄԷՁ ՕՍԿԱՆԵԱՆ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՊՈՒՐՏԱՆԱԾԵՒ ԴԵՑ

Հոյանտայի Մասսորիի քաղաքին մէջ կայացող ԵՄՀԿԻ նախարարներու խորհուրդի հանդիպման ժիրէն ներս Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան հանդիպում ունեցած է Վրաստանի նախագահի պաշտօնակատար Նիւն Պուրճանաձէի հետ, որ ԵՄՀԿԻ նախարարական խորհուրդի հանդիպման կը ներկայացներ Վրաստանը եւ կը մասնակցէր նաեւ իբրեւ ԵՄՀԿԻ խորհրդարանական վեհաժողովի փոխ նախագահ:

Օսկանեան եւ Պուրճանաձէ քննարկեցին Վրաստանի մէջ վերջին վարգաւորումներու հոլովոյթը, սպասուող նախագահական ընտրութիւնները, շրջանային հարցեր, ինչպէս նաեւ երկկողմանի յարաբերութիւններու թղթածրարի շարք մը խնդիրներ, յատկապէս՝ փոխադրամիջոցներու եւ բեռնափոխադրութեան անխա-

Շար.ը՝ էջ 10

ԹՈՒՐԿԻՆՅՈՒՆ ՄԷՁ ՎԵՐՁԵՐՍ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՀԱԲԵԿԶԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՆԱԵՒ ՀԱՅՈՑ ԴԵՍ ԳՈՐԾԱԾ Է ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՁ

«Մեծ Արեւելքի Իսլամական Մարտիկներ» թրքական ահաբեկչական կազմակերպութեան ղեկավարները գործակցած են Ապրայիլեանի հետ:

Այս լուրը հաղորդելով, ապրայիլեանական էլեկտրոնային «Տէյ» (www.day.az) լրատու գործակալութիւնը կը նշէ, թէ արդէն փաստուած է, որ այդ ահաբեկիչները կոռուած են Լեռնային Ղարաբաղի մէջ:

Վերջերս Պոլսոյ մէջ պայթումներու պատասխանատուութիւնը ստանձնած այս կազմակերպութիւնը, ըստ լրատուութեան, Լեռնային Ղարաբաղի տագնապի տարիներուն ահաբեկչա-

Շար.ը՝ էջ 10


ՓԱՂԱՆԳԱԲՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՅՅԵԼԵՑ «ՍԱՐԳԱՐԱՊԱՏ» ԱԿՈՒՄԲ

Երէկ, Հ. Յ. Գ. «Սարգարապատ» ակումբ այցելեց Փաղանգաւոր Կուսակցութեան պատւիրակութիւն մը՝ գլխաւորութեամբ Կուսակցութեան փոխ նախագահ շէյխ Սիմոն Խաչէնի եւ ընդունուեցաւ Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին կողմէ:

Քննարկուեցան երկու կողմերուն միջեւ գործակցութեան եւ յարաբերութեան ամրապնդման հեռանկարները: Պատուիրակութիւնը նաեւ հրաւեր ուղղեց Կեդրոնական Կոմիտէին՝ մասնակցելու Փաղանգաւոր Կուսակցութեան 25րդ ընդհանուր ժողովի բացման նիստին, որ կը կուգադիպի Կուսակցութեան հիմնադրութեան 67ամեակին:

ՈՉ ԵՒՍ Է ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՄԱՀԱԿ Ս. ԱՐՔ. ԱՅՎԱԶԵԱՆ

Կիրակի, 30 Նոյեմբեր 2003ի վաղ առաւօտուն, սրտի կաթուածի հետեւանքով վախճանեցաւ Յունաստանի Հայոց թեմի բազմավաստակ առաջնորդ Գերշ. Տ. Մահակ Ս. արք. Այվազեան: Առաջնորդ սրբազանը Սեյաքիկի մէջ (հիւսիսային Յունաստան) կը մախազահէր շրջանի Ս. Աստուածածին եկեղեցոյ հիմնադրութեան 100ամեակի հանդիսութեան: Հանդիսութեան ընթացքին իր արտասանած խօսքին ամփոփապէս ետք սրտի կաթուած մը կ'ունենայ եւ հակառակ հանդիսութեան ներկայ թիշկներու ճիգին, սրբազանը կ'աւանդէ իր հոգին. Շարաթէն Կիրակի լուսոցով կէս գիշերուան ժամը 12:30ին:



Հոգեւոյս սրբազանի վերջին օժիւրը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 5 Դեկտեմբեր 2003ին, Արեւիկի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցոյ մէջ: Յանուն վեհափառ հայրապետին, վերջին օժիւրն ու յուղակաւորութեան պիտի մասնակցին Գերշ. Տ. Կոմիտաս արք. Օհանեան հոգեւոր տեսուչ Վեներեմիլայի Հայոց, Գերշ. Տ. Վարուժան արք. Հերկելեան՝ կաթողիկոսական փոխանորդ Կիպրոսի Հայոց թեմի եւ Գերշ. Տ. Մուշեղ արք. Մարտիրոսեան առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի: Ընդառաջելով հոգեւոյս սրբազանի փափակին եւ Յունաստանի Ազգային Իշխանութեան խնդրանքին, վեհափառ հայրապետին աւանդուածով, վախճանեալ սրբազանին մարմինը պիտի ամփոփուի իր ընտանեկան դամբարանին մէջ, Արեւիկի Ազգային գերեզմանատան մէջ:

Մահակ արք. Այվազեան ծնած էր 1930 թուականին Կիպրոսի մէջ: Դպրեվանքի ուսումը արարտել էր արեւոյ ձեռնադրուած է 1953ին. Յունաստանի Հայոց թեմի առաջնորդ ընտրուած է 1958ին եւ նոյն տարին եպիսկոպոս ձեռնադրուած: Երաժշտութեան մէջ մասնագիտացած է Արեւիկի Պետական երաժշտանոցէն ներս, երաժշտական Անթիպիոսի Մայր տաճարի երգչախումբին: Ունի դաշնակի եւ երգչախումբի համար դաշնաւորեալ ստեղծագործութիւններ ու յօրինումներ, գաւազան աղիքներով ընտրուած է անցում Մեծի Տանն Կիլիկոյ կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովին:

ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՊԱՍԼՊԵՔԻ ԷՏՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկվ լեռնաշղթայի ստանդարտներին, որ հանդիպում մը ունեցաւ լրագրողներու սենտրոնի նախագահ Մոհամէտ Պալապէթի հետ: Ներկայ գտնուեցաւ նաեւ տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահա:

Հանդիպումին քննարկուի առարկայ դարձան տեղեկատուութեան եւ լրատուութեան աշխատանքին վերաբերող հարցեր:

Միւս կողմէ, Պալապէթի նախագահ Լուիս Տա Սիլվայի Լիբանան կատարելիք այցելութեան պատրաստութեանը շրջագիծէն ներս, վարչապետ Հարիրի երկվ Քորալթի մէջ կայացուց լատուկ նիստ մը, որուն ներկայ գտնուեցան առեւտուրի եւ տնտեսութեան նախարար Մարուան Համատ, ինչպէս նաեւ պրապիցի գործատէրերու մէկ պատուիրակութիւնը:

Նիստին քննարկուի առարկայ դարձան Լիբանան - Պալապէթի երկվողմանի յարաբերութեան անարարման կարելիութիւնները, ինչպէս նաեւ առեւտուրի մարպէն ներս գործակցութեան անհրաժեշտութիւնը:

ՆԱԽԱԳԱԿ ԼԱՀՈՒՏ ԿՐ ՅԱՅՏԱՐԱՐԵ, ԹԵ ՆԱԽԱԳԱԿԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՎ ԵՐԲԵՔ ԶԵ ԵՏԱՔԵՐԵՐՈՒՄԸ

Նախագահ Կր. Էմիլ Լահուտ երկվ կոչուողէն դարձեց օրէնսդրական հարցերու օգտագործումը, նկատել տալով, որ անոնցմէ ամէնէն շեշտուողը նախագահական ընտրապայքարին առնչուած կէտն է: Ան ըսաւ, որ տակաւին երկար ժամանակ կայ նախագահական ընտրութեան իմաստով:



Նախագահ Լահուտ ըսաւ, որ անարար է նշեալ կէտերը օգտագործելով լիբանանցի ժողովուրդին ուշադրութիւնը շեղել առօրէն իր նշեալ «խանգարիչ» քաղաքական կողմերը գործնական գէտնի վրայ գաղտնօրէն կը գործադրեն ճիշդ իրենց կատարած յայտարարութիւններուն հակառակը: «Անոնք կը փորձեն իրենց պատասխանատուութիւնները ուրիշներուն վերաբերել, մինչդէռ իրենք պատասխանատու են կարգ մը կացութիւններու, որոնք հետեւանքն են իրենց իսկ կողմէ սեփական շահեր հետապնդելու եւ երկրին գերագոյն շահերը անտեսելու քաղաքականութեան», աւելցուց նախագահ Լահուտ:

Նախագահ Լահուտ հաւատեց, որ լիբանանցի ժողովուրդը տեղեկ է կացութեան եւ կրնայ դատել թէ ո՞վ է ճիշդը եւ ո՞վ սխալը, եւ անոնց ընտրանքը պիտի ըլլայ հիմնը երկրին ապագայի կերտման:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ նախագահական ընտրապայքարը երբեք պիտի չի հետաքրքրէ: Նախագահ Լահուտ շեշտեց, որ Լիբանանի անկախութեան տօնին առիթով արտասանած իր պատգամին մէջ յստակ նշած է, թէ կարգ մը պատասխանատուներու շահերը, ինչպէս նաեւ ժողովուրդին հոգեբար կը գտնուի իրարմէ հեռու:

Անդրադառնալով Լիբանանի ստորիական վերջին վեհաժողովին, նախագահ Լահուտ նշեց, որ Լիբանան - Սուրիա երկվողմանի յարաբերութիւնները միշտ ալ լաւ եղած են եւ հեպատա ընթացած, միշտ հիմնը ընդունելով փոքր գործակցութեան անհրաժեշտութեան վրայ:

Քարամ ըսաւ, որ նախագահ Լահուտ ըսած է, թէ կը սխալի այն, որ կը կարծէ, թէ շրջանին մէջ վերջերս արձանագրուած դէպքերը տկարացուցած են Սուրիայ եւ Լիբանանի դիմադրութիւնը: Ան շեշտեց, թէ Սուրիա եւ Լիբանան միշտ ալ զօրաւոր գտնուած են շրջանային նման մարտահրաւերներու դիմաց եւ կարիքը ունին աւելի եւս ամրապնդելու եւ յորացնելու իրենց գործակցութիւնը՝ որ սպանալիքներու դիմադրելու նպատակով:

ՍԱՄԻՐ ԺԱՐԸ ՄԻՋՆՈՐԴ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՄՆԵՐՈՒ ԼԻԿԱՅԻՆ

Կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Սամիր Ժարը պիտի վերակազմակերպուի Լիբանանեան Համալսարանի դասախօսներու լիկայի մէկ պատուիրակութեան միջեւ միջնորդի բանակցութիւններ վարելու, քննարկելու համար ուսուցիչներուն պահանջները:

Լիբանանեան Համալսարանի դասախօսներու լիկայի նախագահ Ժարպէլ ԲՖուրի երկվ հաւատեց, որ առաջարկուած լուծումները անբարարար են եւ ոչ-հասուն:

ԲՖուրի խօսք առաւ Հիւսիսի մէջ (Թրիփոլի) Լիբանանեան Համալսարանին հետ կայացած նստաշրջանի ընթացքին: Ան շեշտեց, որ դասաղույն ու նստաշրջանները պիտի շարունակուին եւ մագլցողական քայլերը պիտի գործադրուին, իբրեւ բողոք կատարելութեան կողմէ նշեալ պահանջներուն նկատմամբ ցուցաբերուած անտարբերութեան:

Նշեց, որ նստաշրջանի իրենց մասնակցութիւնը բերին երեսփոխաններ Ժիհատ Սամատ, Մոհամէտ Ապտէլ Լաթիֆ Քապպարա, Մըսայիս Ահուսայ եւ Քայսար Մուսուս, որոնք շեշտեցին Լիբանանեան Համալսարանի դասախօսներու պահանջները գործադրելու անհրաժեշտութիւնը:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սամիա Քըթայմի Միսեան

Օրդ. Մաքրուհի Միսեան
Տէր եւ տիկին Աւետիք Միսեան եւ զաւակը Պրն. Տիգրան Միսեան
Տէր եւ տիկին Մորիս եւ Սիլվա Շամի եւ զաւակուհի Տէր եւ տիկին Վազգէն եւ Անի Մարրիեան եւ զաւակուհի Քըթայմի ընտանիք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, եղբոր, հօրեղբոր, մօրեղբոր, քեռայրին, անբորորդուին եւ Հարազատին՝

ՍԱՐԳԻՍ ՄԻՃԵԱՆԻ (Ծնեալ՝ 1957ին)

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 29 Նոյեմբեր 2003, առաւօտուն, ինքնաշարժի արկածի հետեւանքով, Դամասկոսի մէջ:

Յուզարկաւորութեան պաշտամունքը կատարուեցաւ Կիրակի, 30 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Դամասկոսի Աւետարանական եկեղեցւոյ մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին ծնողքին բնակարանը, Նոր Թոմարգա քաղ, «Ապու Արթի» խաղալիքի վաճառատան կից, շրջ յարկ, Պուրե Համուտ:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Իշխան Նարկիզեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Յարութ Նարկիզեան եւ զաւակուհի Օրդ. Աշխէն Նարկիզեան
Տէր եւ տիկին Վարուժ Նարկիզեան եւ զաւակուհի Տէր եւ տիկին Խաթալ Նարկիզեան եւ զաւակուհի Նարկիզեան ընտանիք
Քեպպեան ընտանիք
Չիրիշեան ընտանիք
Ճիմպաշեան ընտանիք
Սէօքիւնեան ընտանիք
Մինասեան ընտանիք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ Հարազատին՝

ՄԱՐԻ ՆԱՐԿԻԶԵԱՆԻ (Ծնեալ՝ 1929ին)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 1 Դեկտեմբեր 2003ին, իր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 1 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրե Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, «Արաքս» փողոց, Երեքշաբթի 2 եւ Չորեքշաբթի 3 Դեկտեմբերին:

ԲԱՆՏԱՌՈՒՄԸ

Տեր եւ տիկին Յարութ եւ Քարլա Եսայեան
բախտաւորուած են առջինն ճանչ
զաւակով մը՝ ԷՏՈՒՆ
30 Նոյեմբեր 2003 Պէյրութ

ԳՐԱԴՈՒՄԸ ՕՐ

ԼՕԽ «ԱՐՑԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂ ՆԱԽԱՃԱՅ 25 ՓԵՏՐՈՒՄ 2004

ՍՏԱՅԱՆՔ

«ՏԻԵՉԵՐԵԻ ԽՈՒՉԱՐԿՈՒՄ ՍՈՒՐԻՈՅ ՍԷՉ»
ԵՐԿՈՒ ԶԱԲԱԾ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐՉԱՂԵԱՆԻ ԵՏՏ
Եղիմակ՝ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ «ՉԱՆԳԱԿ-97» Երատարակչութիւն Երեւան 2003

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի ժողովուրդի զաւակներուն կողմէն յայտնել, թէ Ազգային Առաջնորդարանը ծրագրած է Լիբանանի Ազգային գերեզմանատուններու իրավիճակը կարգաւորել եւ բարեգործել:

Այս ծրագրին սկզբնական եւ կարեւոր բաժինը կը կազմէ դամբարաններու կալուածագիրներու ստուգումը եւ կարգաւորումը:

Բոլոր այն ազգայինները, որոնք Ազգ. գերեզմանատան դամբարանի կալուածագիր ունին, իրենց անուան կամ անմիջական հարազատին անուան եւ կամ հեռու բարեկամի մը անուան (բայց իրենց թով պահ դրուած) պարտին շրջանի եկեղեցւոյ թաղականութեան գրասենեակը ներկայանալ ամէն օր կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00 եւ ներկայացնեն.

- 1.- Դամբարանի կալուածագիրի լուսապատճենը:
- 2.- Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ընտանեկան իխրած քայտի լուսապատճենը:
- 3.- Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ժառանգութեան իրաւաստիւնը ունեցող անձին անունը, ժառանգական կապը հաստատող ընտանեկան իխրած քայտ, հասցեն եւ հեռաձայնի թիւերը:
- 4.- Կալուածագիրի անուանատիրոջ կամ անմիջական ժառանգորդի երկրէն դուրս բացակայութեան պարագային արտասահմանի հասցեն, հեռաձայնի թիւը, Ե-ճամակ եւ անուանատիրոջ հետ ժառանգական կապը հաստատող փաստաթուղթեր:
- 5.- Կարելի եղած չափով արձանագրել տուեալ դամբարանի մէջ թաղուած անձերուն անունները, ազգականական կապը եւ թաղման թուականները:

ԵՆԱՕԹ.- Կը խնդրուի արտասահմանի թերթերէն՝ արտատպել:

ԴԻՄԱՆ ԱՉԱՅՈՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ 75ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Շովանաւորութեամբ՝
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
Կաթողիկոս Սեօի Տանն Կիլիկիոյ
Տեղի կ'ունենայ Կիրակի, 7 Դեկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 11:30ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» հանդիսարանին մէջ:
ԵՐԱԷՐ

ՏԵՍԱԿԵՏ

ՎՐԱՅԱԿԱՆ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾԱԾ ՀԱՐՅԱԿԱՆՆԵՐԸ

Քաղաքական մեկնաբաններ թէ միջազգային բանաւոր ու գրաւոր մամուլը որքան ալ պնդեն, որ վրաստանի մէջ արձանագրուած վերջին յեղաշրջումը, զոր արեւմտեցիկները քաղաքական հարց է, այդքան ալ համոզիչ չէ, որովհետեւ յստակ է, թէ առաւելաբար հարցին խորքը այլ բան չէ, եթէ ոչ Թիֆլիսի «տիրանաւոր» Մոսկուա-Ուաշինկթըն պայքարը, առանց լրիւ անտեսելու անշուշտ նաեւ ներքին դրդապատճառները:

Եթէ խորհրդային Միութեան փլուզումով բացայայտ դարձաւ այս պայքարին մէջ Թիֆլիսի ամերիկամետ արեւելումը, աւելի ճիշդ՝ հակառուս տրամադրութիւնները, ապա այդ ընթացքը միշտ ալ այդպէս եղած է պատմութեան բոլոր ժամանակներուն: Ամէն անգամ որ վրացիք նուազագոյն առիթը ունեցած են, չեն վարանած իրենց հակառուս կեցուածքը դրսեւորելու...

Ներկայիս թէ ամերիկեան գործօնը առկայ է Կովկասի մէջ, այսուհանդերձ տուեալ շրջանը կը մնայ զիջաւորաբար ռուսական պրոէկցիոններէն: Պատմութիւնը վկայ, որ առնուազն երեք դարէ ի վեր, Մեծն Պետրոսի օրերէն սկսեալ, Կովկասը «պաշտօնապէս» ռուսական վրն է, հակառակ այլ ուժերու թափանցումի բոլոր փորձերուն: Անոնք եթէ երկվ Բրիտանիան կամ Օսմանեան Թուրքիան էին, այսօր անոնց դաշնակից Ուաշինկթընն է:

Վերադառնալով ներկայիս, ըսինք, թէ խորհրդային Միութեան փլուզումով բացայայտ դարձաւ Թիֆլիսի արեւմտամետ թեքումը, Էտտուարտ Շեւարտնաձէի իշխանութեամբ: Մոսկուա հաւանաբար սկզբնական շրջանին մեծ գրաւ դրած էր Շեւարտնաձէի վրայ՝ իբրեւ խորհրդային սոսնձիկատուրայի ակնաւոր դէմբերէն մէկը, սակայն շատ արագ պարզուած էր արդէն, որ ան չէր ուշացած նետուելու Ուաշինկթընի գիրկը, ինչ որ բնականաբար չէր կրնար հաշտ աչքով դիտուիլ Կրեմլինի կողմէ:

Գլխաւոր հարցումը այժմ կը մնայ հետեւեալը. հիմա ի՞նչ: Հիմա, որ Շեւարտնաձէ տապալեցաւ, ի՞նչ ընթացք պիտի ստանայ Ուաշինկթըն-Մոսկուա պայքարը: Հետագայ պարզացումներուն յոյսին տակ, շատ հաւանաբար պայքարը դառնայ աւելի շեշտակի: Երկու կողմերը շատ աւելի ուժգին գործի պիտի մղեն իրենց բոլոր լծակները: Օրինակ, Ուաշինկթըն ունի Պաքու-Թիֆլիս-Ճեյհան քարիւղատարի խաղաքարտը, իսկ Մոսկուա ունի շատ աւելի նկատառելի արուներ, ինչպէս՝ Աբխազիոյ, Աճարիոյ, Օսեթիոյ թղթածրարները:

Շեւարտնաձէն տապալող ընդդիմադիր ճակատը, ըստ երեւոյթի, Շեւարտնաձէին տարբեր քաղաքական արեւելում մը ունի եւ իր կարգին արեւմտամետ իր ձայնը արդէն իսկ լսուցած էր Մոսկուայի: Հակառակ այս իրողութեան, սակայն, Մոսկուա արտաքին գործոց իր նախարարը՝ Իլյոր Իվանովը գործուղեց Թիֆլիս՝ մեկնումի տուժար յանձնելու Շեւարտնաձէի, պարզապէս որովհետեւ վերջինս դէպի Մոսկուա քաղաքական ետդարձի բոլոր կամուրջները արդէն լրիւ այրած էր:

Կը մնայ սպասել Մոսկուա-ընդդիմադիրներ եւ Ուաշինկթըն-ընդդիմադիրներ յարաբերութեանց հետապնդ աճեւորումին՝ որոշ պատկերացում մը ունենալու տակաւին մասնատման վտանգը չթօթափած վրաստանի ապագայ կարգավիճակին մասին: Մինչ այդ, սակայն, մէկ բան յստակ է, որ եթէ կարելի չէ վստահ ըսել, թէ երկու գերպետութիւններէն ո՞վ է շահաւորը, ապա ամենայն ինքնավստահութեամբ կարելի է հաստատել, թէ միակ տուժողը ինչորոշ առարկայ Թիֆլիսն է:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՀԱՆԳԻՍ

ԳԵՐՇ. ՍԱՀԱԿ ԱՐԸ. ԱՅՎԱԶԵԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՅՈՒՆԱՍԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ եւ Կիլիկեան Ա. Աթոռոյս միաբանութիւնը խոր վերտով կը գուժեն իրենց սիրեցեալ միաբանին եւ Յունաստանի Հայոց Թեմի առաջնորդին՝

Տ. ՍԱՀԱԿ ԱՐԸ. ԱՅՎԱԶԵԱՆԻ (1930 - 2003)

անակնկալ վախճանուած, որ պատահեցաւ Կիրակի, 30 Նոյեմբերին, Յունաստանի մէջ:

Հոգեւոյս սրբազանին վերջին օժման արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 5 Դեկտեմբերին, Աթէնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ մէջ: Ապա սրբազանին մարմինը պիտի ամփոփուի Աթէնքի Ազգային գերեզմանատան մէջ:

ԳԻՒՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԻՐԱՔԱՅԱՅ Գ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆՆԵՐԸ ԿԵՐԱԴԱՐՁԱՆ ՊԱՐՏԱՏ

Տասը օր Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական վարչու- րեան հիւրը ըլլալէ ետք, իրաքահայ Հ.Ս.Ը.Ս.ականներու պատուիրակութիւնը երէկ, երեկոյեան, վերադարձաւ Պարտատ Լիբանանէն տանելով Հ.Ս.Ը.Ս.ական դաստիարակու- րեան, գրականութեան եւ շերտութեան կարեւոր դասեր:

Պատուիրակութիւնը վերջին օրերուն շարու- նակեց սեմինարային բնոյթի իր դասախօսու- թիւններուն շարքը եւ լսեց չորս դասախօսու- թիւններ: Ուրբաք օր, պատուիրակութեան ան- դամները այցելեցին Համազգայինի Մեյանք- թոն եւ Հայկ Արալեանի ձեռնարկն եւ Զմմառի Հայ կաթողիկէ վարչ: Ապա, անոնք աշխատան- քային հանդիպում մը ունեցան Հ.Ս.Ը.Ս.ի Լիբա- նանի Շրջանային վարչութեան հետ:

Շաբաթ օր, պատուիրակութիւնը ներկայ գտնուեցաւ Հ.Ս.Ը.Ս.ի Պուրճ Համուտի մասնաճի- ղի աստիճանաւորական սեմինարին, Պիթքայա: Ապա ընթրիքի հիւրը եղաւ Հ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի Շրջանային Սկաութական խորհուրդին:

Կիրակի առաւօտեան, պատուիրակութիւնը Ս. Նշան Մայր եկեղեցիին մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարեց ի իշտակ իրաքի մէջ գոր- ծած ծանօթ մտաւորականներ տոքթ. Բաբգէն Փափազեանի եւ Լեւոն Գարսեանի: Ապա, այցե- լութիւն մը կատարուեցաւ Պուրճ Համուտի Այ- գային գերեզմանատուն, ուր Հ.Ս.Ը.Ս.ի Պաղ- տատի մասնաճիւղին անունով ծաղկեպսակներ պետեղուեցան Հ. Գ. Գ. պանթեոնին եւ Լիպոնի հերոսներու շիրիմին:

Յետմիջօրէին, պատուիրակութիւնը ճաշի հիւրը եղաւ Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յով- նանեանին: Ապա, ներկայ գտնուեցաւ Հ.Ս.Ը.Ս.ի Պէյրութի մասնաճիւղի սկաութական վերամուտին, որմէ ետք պարբեր մը մը մը ու- նեցաւ Հ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի Շրջանային եւ Կեդ- րոնական վարչութեան անդամներուն դէմ:

Երէկ, Պէյրութ կեցութեան իրենց վերջին օրը, պատուիրակութեան անդամները այցելեցին «Ալդալ», «Վանա Չայն», «Քազին» եւ իրանա- նահայ նահատակներու յուշակոթող: Ապա, անոնք հանդիպում մը ունեցան Պուրճ Համու- տի քաղաքապետին հետ, որուն ընթրիքի հիւրը եղան աւելի ուշ:

Հանդիպումներու շարքին վերջինը կատար- ւեցաւ Հ. Գ. Գ. «Չաւարեան» Ուսանողական Միութեան հետ, «Երեւանեան» կեդրոնին մէջ:

Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ (Կենսագրական գիծեր)

Տ. Սահակ Ս. արք. Սյվապեան, աւապանի անունով Յակոբ, ծնած է Յամակուսթա (Կիպ- րոս), ստանացի ծնողքէ, 1929ի վերջերք:

Նախնական կրթութիւնը կը ստանայ յունա- կան վարժարանի մը մէջ, ապա կը յաճախէ հայ- կական վարժարան: Այնուհետեւ՝ քանի մը տա- րի ալ Մէլքոնեան երկրորդական վարժարան: 1947ին մուտք կը գործէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքը՝ կուսակրօն եկեղեցական դառնալու փափաքով: Դպրեվանքի ծառայութեան ընթացքին ընթացքին 1953ին յաջողութեամբ աւարտելէ ետք, նոյն տարին արեւոյ կը ձեռնադրուի դպրեվանքի տեսուչ Տ. Գերեմի կաթիկոսոս Փոլատեանի ձեռնամբ եւ կը կոչուի Տ. ՍԱՀԱԿ ԱՅՎԱԶ, ի յիշատակ Կիլիկիոյ տարագիր Աթո- ռի երջանկայիշատակ հայրապետ Տ. Սահակ Բ. կաթողիկոս ի սպասելու:

Ուսանողութեան տարիներէն յատուկ սէր ու- նենալով երաժշտութեան հանդէպ, արեւոյն- թեան շրջանին 3 տարի կը յաճախէ Պէյրութի Պետական երաժշտանոցը, միաժամանակ վարե- լով Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի դպրատանի եւ ուսուցիչի պաշտօններ՝ դպրեվանքին ներս: Այս բոլոր պաշտօններու եւ պարտականութիւններու կողքին, Սահակ արե- ղայ կրօնի դասեր ալ կ'աւանդէ Պէյրութի ազ- գային վարժարաններուն մէջ եւ կարճ ժամա- նակ մըն ալ կ'ըլլայ Հայաստանեայց եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարաններու տեսուչ-տնօ- րէն:

1957ին կը ստանայ վարդապետական գաւա- պան կրելու իշխանութիւն:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դա- րաւոր Աթոռի շուրջ շրջապագած սպա- յին-եկեղեցական տաճնապի շրջանին, Անթի- լիաս մնացած քանի մը ուխտեալ միաբաններով Սահակ վարդապետ զօրավիզ եւ թիկունք կը կանգնի Աթոռի անկախութեան:

Յունահայ թեմի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթո- ղիկոսութեան միանալէ ետք, թեմի պատգամա- տրական գերագոյն ժողովը 1958ին կ'ընտ- րէ առաջնորդ, երբ հապի 27 տարեկան երիտա- սարդ վարդապետ էր: Վեցամեայ պաշտօնա- վարութեան կարճ շրջանէ մը ետք, Սահակ վար- ղապետ կը մեկնի Ս. Աթոռ Անթիլիաս եւ երջան- կայիշատակ Տ. Տ. Չարեհ Ա. կաթողիկոսի ձե- ճումբ եպիսկոպոս կը ձեռնադրուի, ապա իսկոյն կը վերադառնայ իր պաշտօնատեղին:


Իր պաշտօնավարութեան շրջանին, Սահակ արքայան առիթ կ'ունենայ տարի մը հետեւե- լու Աթէնքի համալսարանի Ստուածաբանա- կան ճիւղի դասընթացքներուն, ինչպէս նաեւ բիւզանդական երաժշտութեան յատուկ դասը- թացքներու եւ յաջողութեամբ կ'աւարտէ Աթէ- քի յունական «Աթինոն» երաժշտանոցի բարձ- րագոյն դասարանը: 1964ին Սահակ արքայան երջանկայիշատակ խորէն Ա. կաթողիկոսի կոչ- մէ կը ստանայ Արքութեան տիտղոս եւ պատիւ, ի տրիտուր իր բարոք ծառայութիւններուն:

Սահակ արքեպիսկոպոս կատարած է դասա- կան երաժշտութեան դաշնակի յատուկ յօրի- նումներ, որոնցմէ տասը արդէն իսկ տպուած են:



ԱՆՍԻՄԱԼ ԳՐԵՆՔ 2003

- Եթէ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտ ես. մասնակցէ՝ «Պատկեր - Սպտիկ»ի հայերէն ուղղագրութեան մրցումին: - Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դաս- րանի աշակերտներ: - Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 10 նոյեմբերէն 2 դեկտեմբեր. հեռաձայնելով 01 - 260115 թիկն, եր- կուշարթիւն Ուրբաք օրերը, կէսօրէ ետք ժամը 3:00էն 5:00: - Մրցումը տեղի կ'ունենայ կիրակի, 7 դեկտեմբերին, Մետրոպեան վարժարանի սրահին մէջ, կէսօրէ ետք, ժամը 3:00էն 4:00 4րդ դասարան, 4:00էն 5:00 5րդ դասա- րան, 5:00էն 6:00 վեցերորդ դասարան: - Իւրաքանչիւր մակարդակի շահողը պիտի ստանայ ար- ձեքատր նուէր մը. իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յիշատակի նուէրներ: - Յաւելեալ տեղեկութիւններու համար հետեւիլ «Ազ- րակ»ին: Որեճարձութիւն - մրցումին մասնակցող աշակերտները պարտին մրցումին վայրը հասած ըլլալ մրցումին ժամը կէս ժամ առաջ: - աշակերտները իրենց հետ պետք է ունենան գրեական պիտոյքներ: ԱՍՏԱՅԱՅՆՆԻ ԳՐԱՍԱՆՈՒԹ. «Ճաղոցեան» կեդրոն. հեռ.՝ 01-241263/4



ԻՆՏ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲՐԱՆՆԵՐՆ ՕՐԱԹԵՐՈՒԹԵՐԸ

1 դեկտեմբերի լի- բանական օրաթեր- թերը յուսարձակի տակ առած են խորհր- դարանի նախագահ Նեպի Պրերիի Սու- տան այցելութիւնը եւ տեսակցութիւնը պաշ- տօնական անձնաւո- ռութիւններու հետ, Լիբանանեան Համա- լսարանին մէջ տեղի ունեցող դասադուրը եւ նախագահական ընտրութիւններուն առնչուող յուրերը:

Շրջանային եւ մի- ջազգային յուրերու շարքին իրաքեան վարչագումներն ու պաղեստինեան տազ- նապը եւ անոր լուծ- ման համար Շարունի եւ Քորէյի միջեւ կազ- մակերպուող հանդի- պումը կը գրաւեն օրա- թերթերուն հիմնական յուրերը:

Լուս թերթին, ամե- րիկեան գաղտնի սպասարկութիւնը կը վկայէ, թէ իրաքեան պէնքերուն առնչու- թեամբ իր ունեցած տեղեկութիւնները անբաւարար են: Թերթը նշած է, թէ սպանական գաղտնի սպասարկութեան 7 անձեր եւ երկու ճա- փոնցի դիւանագետ- ներու սպանութեան էտք, քոյովպիացի եւ քորէացի մը սպան- ւուեցան յարձակումի մը ընթացքին:

«Նահար» գրած է, թէ ամերիկացիներուն հետ բախումներու ըն- թացքին 46 իրաքցիներ սպանուած են, իսկ Ուաշինկթընի դաշնա- կցիներուն վրայ յար- ձակումները աւելի եւս կը սաստկանան եւ Կո- հերուն թիւը կը բարձ- րանայ:

Լուս «Սաֆիր»ի, իրաքեան ուժերուն յարձակումները աւելի եւս սաստկացան եւ իրենց թիրաք դար- կողմէ, համալսարան- նականները փողոցը մնացած են, իսկ երկ- րին մտաւորական խաւը կը գաղթէ: «Տիար»ի համա- ձայն, Հարիթի առա- ջարկներով Լիբանան- եան Համալսարանի հարցին լուծումներ գտնելու յոյսեր երեւ- ցան: Չորեքշաբթի օր- ւան նիստը պիտի յատկանշուի ուսուցիչ- ներու բողոքի ցոյցե- րով, իսկ փորձեր ու հաղորդակցութիւն- ներ կը կատարուին երկու նախագահները

«Սաֆիր» օրաթեր- թը գրած է, թէ Սահա- նադրութիւնը փոփո- յունեան ենթարկելու առնչութեամբ եղած մեթոմի ախրը կը սաստկանայ եւ անոր առնչուող կեցուածք- ները կը բազմանան: Լուս թերթին, նա- խագահներուն միջեւ պատերազմը կը շա- րունակուի, հակառակ ինդրայարոյց թրթա- ծրարները փակելու առնչութեամբ եղած խրատներուն: Միւ- կողմէ, համալսարան- նականները փողոցը մնացած են, իսկ երկ- րին մտաւորական խաւը կը գաղթէ:

«Տիար»ի համա- ձայն, Հարիթի առա- ջարկներով Լիբանան- եան Համալսարանի հարցին լուծումներ գտնելու յոյսեր երեւ- ցան: Չորեքշաբթի օր- ւան նիստը պիտի յատկանշուի ուսուցիչ- ներու բողոքի ցոյցե- րով, իսկ փորձեր ու հաղորդակցութիւն- ներ կը կատարուին երկու նախագահները

«Սաֆիր»ի, իրաքեան ուժերուն յարձակումները աւելի եւս սաստկացան եւ իրենց թիրաք դար- կողմէ, համալսարան- նականները փողոցը մնացած են, իսկ երկ- րին մտաւորական խաւը կը գաղթէ: «Տիար»ի համա- ձայն, Հարիթի առա- ջարկներով Լիբանան- եան Համալսարանի հարցին լուծումներ գտնելու յոյսեր երեւ- ցան: Չորեքշաբթի օր- ւան նիստը պիտի յատկանշուի ուսուցիչ- ներու բողոքի ցոյցե- րով, իսկ փորձեր ու հաղորդակցութիւն- ներ կը կատարուին երկու նախագահները

«Սաֆիր»ի, իրաքեան ուժերուն յարձակումները աւելի եւս սաստկացան եւ իրենց թիրաք դար- կողմէ, համալսարան- նականները փողոցը մնացած են, իսկ երկ- րին մտաւորական խաւը կը գաղթէ: «Տիար»ի համա- ձայն, Հարիթի առա- ջարկներով Լիբանան- եան Համալսարանի հարցին լուծումներ գտնելու յոյսեր երեւ- ցան: Չորեքշաբթի օր- ւան նիստը պիտի յատկանշուի ուսուցիչ- ներու բողոքի ցոյցե- րով, իսկ փորձեր ու հաղորդակցութիւն- ներ կը կատարուին երկու նախագահները

«Սաֆիր»ի, իրաքեան ուժերուն յարձակումները աւելի եւս սաստկացան եւ իրենց թիրաք դար- կողմէ, համալսարան- նականները փողոցը մնացած են, իսկ երկ- րին մտաւորական խաւը կը գաղթէ: «Տիար»ի համա- ձայն, Հարիթի առա- ջարկներով Լիբանան- եան Համալսարանի հարցին լուծումներ գտնելու յոյսեր երեւ- ցան: Չորեքշաբթի օր- ւան նիստը պիտի յատկանշուի ուսուցիչ- ներու բողոքի ցոյցե- րով, իսկ փորձեր ու հաղորդակցութիւն- ներ կը կատարուին երկու նախագահները

«Սաֆիր»ի, իրաքեան ուժերուն յարձակումները աւելի եւս սաստկացան եւ իրենց թիրաք դար- կողմէ, համալսարան- նականները փողոցը մնացած են, իսկ երկ- րին մտաւորական խաւը կը գաղթէ: «Տիար»ի համա- ձայն, Հարիթի առա- ջարկներով Լիբանան- եան Համալսարանի հարցին լուծումներ գտնելու յոյսեր երեւ- ցան: Չորեքշաբթի օր- ւան նիստը պիտի յատկանշուի ուսուցիչ- ներու բողոքի ցոյցե- րով, իսկ փորձեր ու հաղորդակցութիւն- ներ կը կատարուին երկու նախագահները

«Սաֆիր»ի, իրաքեան ուժերուն յարձակումները աւելի եւս սաստկացան եւ իրենց թիրաք դար- կողմէ, համալսարան- նականները փողոցը մնացած են, իսկ երկ- րին մտաւորական խաւը կը գաղթէ: «Տիար»ի համա- ձայն, Հարիթի առա- ջարկներով Լիբանան- եան Համալսարանի հարցին լուծումներ գտնելու յոյսեր երեւ- ցան: Չորեքշաբթի օր- ւան նիստը պիտի յատկանշուի ուսուցիչ- ներու բողոքի ցոյցե- րով, իսկ փորձեր ու հաղորդակցութիւն- ներ կը կատարուին երկու նախագահները

«Սաֆիր»ի, իրաքեան ուժերուն յարձակումները աւելի եւս սաստկացան եւ իրենց թիրաք դար- կողմէ, համալսարան- նականները փողոցը մնացած են, իսկ երկ- րին մտաւորական խաւը կը գաղթէ: «Տիար»ի համա- ձայն, Հարիթի առա- ջարկներով Լիբանան- եան Համալսարանի հարցին լուծումներ գտնելու յոյսեր երեւ- ցան: Չորեքշաբթի օր- ւան նիստը պիտի յատկանշուի ուսուցիչ- ներու բողոքի ցոյցե- րով, իսկ փորձեր ու հաղորդակցութիւն- ներ կը կատարուին երկու նախագահները

«Սաֆիր»ի, իրաքեան ուժերուն յարձակումները աւելի եւս սաստկացան եւ իրենց թիրաք դար- կողմէ, համալսարան- նականները փողոցը մնացած են, իսկ երկ- րին մտաւորական խաւը կը գաղթէ: «Տիար»ի համա- ձայն, Հարիթի առա- ջարկներով Լիբանան- եան Համալսարանի հարցին լուծումներ գտնելու յոյսեր երեւ- ցան: Չորեքշաբթի օր- ւան նիստը պիտի յատկանշուի ուսուցիչ- ներու բողոքի ցոյցե- րով, իսկ փորձեր ու հաղորդակցութիւն- ներ կը կատարուին երկու նախագահները

«Սաֆիր»ի, իրաքեան ուժերուն յարձակումները աւելի եւս սաստկացան եւ իրենց թիրաք դար- կողմէ, համալսարան- նականները փողոցը մնացած են, իսկ երկ- րին մտաւորական խաւը կը գաղթէ: «Տիար»ի համա- ձայն, Հարիթի առա- ջարկներով Լիբանան- եան Համալսարանի հարցին լուծումներ գտնելու յոյսեր երեւ- ցան: Չորեքշաբթի օր- ւան նիստը պիտի յատկանշուի ուսուցիչ- ներու բողոքի ցոյցե- րով, իսկ փորձեր ու հաղորդակցութիւն- ներ կը կատարուին երկու նախագահները

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՆԱՍԵՂՈՒԿԱՆ ԶՕՐԻՆՈՒՄԻ ՄՐՅԱՆԸ

Հ. Բ. Ը. Միութեան - Հ. Ե. Ընկերակցութեան «Այլք Մանուկներ» Կեդրոնի Մշակութային Յանձնախումբը 8րդ տարին ըլլալով կազմա- կերպեց Բանաստեղծական Յօրինումի մրցանք, 12ին 18 տարեկան բոլոր հայ պար- ձար-պարմանուիներուն համար: Մրցանքը նուիրուած էր Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» 1000ամեակին:

Յանձնախումբը, նախորդ տարիներուն նման, մասնաւոր նամակներով դիմեց հայկա- կան երկրորդական եւ միջնակարգ բոլոր վար- ժարաններու տնօրէնութիւններուն: Իւրաքան- չիւր անձ մասնակցեցաւ մրցանքին՝ երկու բա- նաստեղծութեամբ. մէկը՝ պարտադիր՝ նիւթ ու- նենալով «Նաղաղութիւն», իսկ երկրորդը ազատ:

- Ինը վարժարաններէ մասնակցեցան 41 հոգի. Մեյգոնեան Կրթական Հաստատութիւն 20 հոգի Պօղոս Գ. Կարմիրեան վարժարան 6 հոգի Մեքրոպեան վարժարան 4 հոգի Չարեհեան Դպրեվանք 3 հոգի Վահան Թէքէեան վարժարան 3 հոգի Կեդրոնական Բարձրագոյն վարժարան 2 հոգի Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան վարժարան 1 հոգի

Շամլեան Թաթևեան վարժարան 1 հոգի Գէորգ Հարպոյեան վարժարան 1 հոգի Գատական կապի անդամներն էին Պէյօ Սիմոնեան, Սարգիս Կիրակոսեան եւ Արմէն Իրնէշլեան, որոնք առանձինն գնահատելէ ետք իւրաքանչիւր մասնակցողի գործը, յանգե- ցան հետեւեալ եզրակացութեան, ժողովի մը ընթացքին, ուր ներկայ էին նաեւ յանձնախում- քի անդամները:

- (ՏԱՆՕԹ.- Մրցանքին մասնակցողները կը ներկայացուին դատական կապի անդամնե- րուն՝ միայն թիւերով): Կրտսերներ.- Ա. մրցանակ՝ Մանիա Ասատրեան, «Ամու- ռազ Մէր» - Մ. Կ. Հ. Բ. մրցանակ՝ Նունէ Սարգիսեան, «Երազ» Կ. Թէքէեան վրձ. Գ. մրցանակ՝ Վլատիկ Միսասեան, «Իմ Հայ- րենիք» Մ. Կ. Հ. Գ. մրցանակ՝ Գանիա Աղուորեան, «Գարուն է» Կարմիրեան Յիշատակութեան արժանի՝ Լուսինէ Առաքելեան «Միայն ծաղիկն է որ չի բանբասում» Մ. Կ. Հ. Երէցներ.- Ա. մրցանակ՝ Յովիկ Արաքելեան, «Աղօթք առ Նարեկացի» եւ «Մի խենդ ստուեր» Մ. Կ. Հ. Բ. մրցանակ՝ Թայիկ Արզեան, «Ինչու տխուր է Լուսինը այս գիշեր» Սոֆիա Յակոբեան Գ. մրցանակ՝ Սօս Սարաճեան, «Յուշերիս սեւ ծովերում» Մ. Կ. Հ. Գ. մրցանակ՝ Վարանդ Թոփալեան «Չեմ գի- տեր ինչու...» Կարմիրեան Յիշատակութեան արժանի՝ Մարի Կապար- եան «Աղօթք մը» Կ. Բ. Կ. Մրցանակարաշխութիւնը կատարուեցաւ 7 Նոյեմբեր 2003, Գրիգոր Նարեկացիին նուիր- ւած բանաստեղծութեան մը ընթացքին: Յանձնախումբը կը շնորհատրէ մրցանքի բոլոր մասնակցողները եւ կը մաղթէ անոնց յարատեւութիւն:
 - Ընտրակալութիւն դատական կապի ան- դամներուն, Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. Ի վարչական պատասխանատուներուն եւ բոլոր այլ ուսու- ցիչներուն եւ դպրոցի տնօրէններուն, որոնք ցիւցններուն եւ դպրոցի տնօրէններուն, որոնք քաջալերեցին հայ ռուսաողը՝ մասնակցելու Բանաստեղծական Յօրինումի մրցանքին:
 - Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. «ԱԼԵԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ» ԿԵԴՐՈՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՆՉՆԱՍՈՒՄԻ

ԹՈՒՆԻ ԽԱԼԻՖԵ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ Պատկերասփիւղի LBC կայանի համա- ծանօթ խօսման եւ յայտագիրներու հաղոր- ղավար ԹՈՒՆԻ ԽԱԼԻՖԵ այսօր՝ Երեքշաբ- քի, 2 դեկտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին պիտի պատասխանէ ՀԱԼԱ ՀԱՏ- ՏԱՏԻ հարցումներուն՝ Շաբաթ երեկոյեան պատկերասփիւղի իր յայտագիրին, ընտր- ւած հիւրերուն եւ LBCԸ հեռահաղորդ- ւած շրջան ընդ շուկայներուն վերաբերեալ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔ ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ... ԹՈՒՐՔԻԱՅԷՆ

Վերջին քանի մը տասնամեակներուն թրջական տնտեսութեան եւ արտադրութիւններուն դէմ մեր շղթայագրած պայքարը կը գտնուի իր դասական պարունակէն դուրս ելլելու փուլին մէջ:

Դասական դարձած ըմբռնումով, թրջական արտադրութիւններու վաճառքին եւ սպառման դէմ տարուան պայքարը պարզապէս չի միտրի թուրքիոյ պետական եկամուտը զրկել մեր լուսավէճ (որ է պէտք լուսավէճի իր դէմ թրջական արտադրութիւններու ծաւալին), այլ մեր պայքարի չլայտարարուած նպատակը հայուն մօտ արմատացնել է թուրքին եւ թրջականին նկատմամբ վանողական զգացումներ, այնքան ստեղծ որ թուրքը կը մերժէ ստանձնել իր գործած ցեղասպանութեան պատասխանատուութիւնը:

Լիբանանահայ գաղութը այսօր կը դիմագրուէ նոր տեսակի մարտահրաւէր մը նոյնիման թուրքիոյ տնտեսութեան, որ ուղղակիօրէն կը սպառնայ մեր գաղութի տնտեսական իրավիճակին:

Գիտենք, որ մեր գաղութի աւելի քան շօշափելի մէկ տոկոսի եկամուտի աղբիւրը կը հանդիսանայ ոսկերչութիւնը, որուն մէջ հաշվաւոր է հայ թէ՛ Լիբանանի մէջ եւ թէ՛ այլուր: Ոսկերչութեան մարզը միշտ կը զբաւէ նաեւ Լիբանանի արտածումներու ցուցակին վրայ ուղղահայեաց առաջին դիրքերը, որ Լիբանանի պետութեան կ'ապահովէ հսկայական գումարներ տնտեսական այս «հիւանդագին» օրերուն:

Լիբանանի գոհարավաճառը թէ՛ եւ արտածման շուկաներ ունի գրեթէ աշխարհի բոլոր կողմերը, սակայն անոր գլխաւոր շուկան կը հանդիսանան Մոսկոյ երկիրները, որուն ծաւալը եւ պահանջի բարձր համեմատութիւնը կը շարունակէ հրապուրել արտադրողներ Մայրաքաղաք Ասիոյ արագ աճող եւ ծաւալող տնտեսութիւններէն մինչեւ թուրքիոյ քայքայուած տնտեսութիւնը, որ իր քայքայուածութեան եւ, հետեւաբար, նաեւ աժան աշխատավարձերու պատճառով ունի մրցակցութեան շատ մեծ կարելիութիւններ, որոնք դժբախտաբար կը գերազանցեն լիբանանցի արտադրողին կարելիութիւնները:

Ի մտի ունենալով տնտեսական այս բնագաւառին զգայնութիւնը տնտեսական համաշխարհային նոյնիման նշան վերելքի տարիներուն նկատմամբ, ոսկերչութիւնը վերջին տարիներուն ակրեցաւ անգործութեան շատ բարձր համեմատութիւն, որ նաեւ իր կարգին պատճառ դարձաւ աշխատավարձերու մեծ անկման եւ, հետեւաբար, մեր գաղութի արհեստավարներու եկամուտի կրճատման:

Այս բոլորին վրայ կը գալ աւելնալու նոր եւ մանաւանդ հայերու համար անընդունելի այլ գործօն մը՝ թուրք գոհարավաճառներու ներխուժումը դէպի Մոսկոյ շուկաներ: Թրջական գանձապահ արտադրողներ անցեալին միշտ կատարած են երկչոտ փորձեր մասնակցելու արտաքին գանձապահ երկիրներու մէջ կազմակերպուած ցուցահանդէս-վաճառքներու, բայց հաւանաբար քաջալերող գործունեութիւնը չգոյութեան պատճառով անոնց մասնակցութիւնը մնացած է միշտ լուսանցքային:

Սակայն նոյնը չէ պարագան վերջին քանի մը տարիներուն, ուր թրջական արտադրողները թիւր զգալի աճ արձանագրած է, որուն պատճառը ոչ թէ շուկայի խրախուսիչ վիճակն է, այլ՝ թրջական տնտեսութեան անմոխիթար վիճակը, ուր թուրք արտադրողը կը մղէ «կենաց մահու» պայքար՝ դիմանալու շուկայի պարտադրած դժուար պայմաններուն:

Թուրք արտադրողին այս «կենաց մահու» պայքարը կը ստեղծէ իսկական կենաց մահու պայքար լիբանանցի արտադրողին համար, որ այլևս կը գտնուի աժան աշխատավարձով եւ նուազ շահով աշխատելու հարկադրանքին տակ, որ սակայն կը դառնայ աւելի դժուար Լիբանանի կենաքի համեմատաբար սուղ պայմաններուն մէջ:

Հայ արհեստավարը անգամ մը եւս կը գտնուի հայու ճարտարութեամբ իր մորթը փրկելու հարկադրանքին տակ: Թուրքը թրեւս իր աժան արտադրութիւններով կրնայ «հրապուրել» աժան արտադրութիւններ փնտրող սպառողը, բայց հայ արհեստավարն ալ պէտք է կարենայ իր բարձր ճաշակով եւ գործի անմրցելի որակով հրապուրել մակարդակ փնտրող սպառողը, որ տակաւին գոյութիւն ունի մեծ համեմատութիւններով:

Հայ արհեստավարին կը մնայ ըսել իր վերջին խօսքը...

ՎԱՐՈՒԹ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Հայ Աւեր. Կերթմենեան Կարծարան

ԿԱՂԱՏԻՊ ՊԱՋԱՐ

Տեղի կ'ունենայ 5 եւ 6 Դեկտեմբեր 2003ին, Կեսօրէ առաջ ժամը 10:00ԷՆ մինչեւ երեկոյեան ժամը 5:00, Կարծարանի սրահին մէջ:

Հրատր

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենտին:

ԿԿԱՅՈՒԹԻՒՆ՝ ՍՈՌԱՅՄԱՆ ԴԷՍ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԵՐԱԶԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Այս տողերը կը նուիրեն 1979-1980 տարիներու սրտի մարդ գործակիցներու



ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Աւելի քան քսան տարի առաջ, հեռաձայնը հնչեց: Հանգուցեալ Հրայր Մարտիան Գիս Պէյրուսի հրաւիրեց, Համազգայինի կեդրոնական Վարչութեան հետ հանդիպման մը համար:

Քաղաքացիական անհեթեթ պատերազմի մէջ էր երկիրը, այդ 1979ի Մայիսին: Յետ խորհրդակցութեան, որոշուեցաւ որ լրիւ տարի մը ուսումնասիրեմ Ֆրանսայի մէջ Համազգայինի դպրոց մը հիմնելու կարելիութիւնները: Այսինքն՝ Եւրոպայի Հայ Ճեմարան մը: Հարցը քննուած էր գանազան ժողովներու ընթացքին: Զիս զարմացուցած էր Համազգայինի կեդրոնական Վարչութեան քաջութիւնը: Երբ Լիբանանի կուրծք կու տար դժուարութիւններու, տեղական մտահոգութիւններէ վեր բարձրանալով, մարդիկ կային որոնք կը ստանային համահայկական հեռանկարներով: Այդպէս և լրջալ ղեկավարութեան առաջինութիւնը:

Անմիջապէս յայտնեմ որ Ֆրանսայի մէջ շատեր խանդավառուած չէին նման ծրարքով մը, անկախ իր կը համարէին, կը խորհէին որ նման նախաձեռնութիւն դատապարտուած էր ձախողութեան, մանաւանդ որ գոյութիւններուց քանի մը վարժարանները փայլուն վիճակ չունէին: Նախնական խորհրդակցութիւններու ընթացքին անհիմն կարծիքներ եւս յայտնուեցան, ըստ որոնց պետութիւնը չէր արտօներ օտար վարժարանի մը հիմնումը: Երբ պնդեցի որ հարկ էր տեղեկանալ պայմաններուն մասին, եզրակացուեց չառաջ, սկսան միջնորդներ փնտրել կրթական նախարարութեան դիմելու եւ լուսաբանուելու համար:

Երբ անճիկեցան, այդ էր կացութիւնը, ըսի պարզապէս որ կը հեռաձայնեմ

նախարարութիւն եւ բացատրութիւն կը խնդրեմ: Նախարարութեան անմիջապէս ժամադրութիւն մը ճշդեցին, գացի տեսակցութեան եւ կրթական պաշտօնատարը յայտնեց որ Ֆրանսայի մէջ դպրոց հիմնելու սկզբունքային ոչ մէկ արգելք կար, կային պայմաններ, մասնաւոր վարժարանի պարագային, վկայականի եւ հպատակութեան հետ հանդիպման մը համար:

Երբ Լիբանանի կուրծք կու տար դժուարութիւններու, տեղական մտահոգութիւններէ վեր բարձրանալով, մարդիկ կային որոնք կը ստանային համահայկական հեռանկարներով: Այդպէս և լրջալ ղեկավարութեան առաջինութիւնը:

Երբ անճիկեցան, այդ էր կացութիւնը, ըսի պարզապէս որ կը հեռաձայնեմ

թիւնը: Այս սկզբունքային համաձայնութեան ետք նախապատրաստական լայնածիր աշխատանք անհրաժեշտ էր, մանաւանդ քանդելու համար ընդհանուր շատեր ունէին, որ այս ծրագիրը դուրսէն կը պարտադրուէր, տեղական պահանջները չէին հարկաւորուէր: Աստիճանաբար, գանազան հորիզոններու պատկանող անձերու հետ տեսակցութիւններ եւ զրոյցներ մեղմացուցին բացասական վերաբերմանները եւ գործակցելու պատրաստակամութիւնը: Սա հարկաւորուեցաւ, ազնիւ եւ ազնուապէս մարդիկ, որոնց անունները չեն յիշուիր, դժբախտաբար, որոնք գոհողութեան ռարձը գիտակցութիւն ցուցաբերեցին, իրենց անձով վճարեցին մեծ ծրագրի իրականացման առաջին քայլերու համար: Տեւաբար պէտք է ի մտի ունենալ, յաճախ մերժումի, ընդհանրապէս գերահաւատութեան մթնոլորտը: Նոյնիսկ տարբեր քէներ պատմաստուեցան, ազնիւ եւ բարի կամեցողութիւն ունեցող անձերու յամառ կերպով թելադրուեցաւ...

Համահայկացի: Դրական գործ կատարողներուն անունները օր մը պէտք է թուել, յօրինակ այլոց, որովհետեւ անոնք հանգիստացան վճար ուրու վրայ մաս առ մաս իրագործուեցաւ Համազգային առաջադրանքը: Իսկ թեւաւորուեցան վաշխառուները իր պայտ կարեւոր չեն: Մեծ կուսակցութեան մը պայծառ ճակատով դեկավարը, իր մահուընէն առաջ գրած էր. Գործն է միայն կենդանի... Իսկ բանաստեղծ Մառուկեանի բառերով, երկնքի մէջ պարզուող աստղին ո՛վ կրնայ վարագոր քաշել:

Դեռ դպրոցը թուրքի վրայ էր: Թեւահաւատները խենթութիւն կը համարէին ծրագիրը...

3. ՊԱՆԵԱՆ (Շար. 1)

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Դեկտեմբեր 1-5 Լիմասոլի (Կիպրոս) մէջ տեղի պիտի ունենայ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի համաժողովը: Զորս տարին անգամ մը գումարուող այս համաժողովին պիտի մասնակցին Միջին Արեւելքի բոլոր եկեղեցիները՝ Ուղղափառ, Ուղղափառ ոչ Քաղկեդոնական, կաթոլիկ եւ բողոքական: Համաժողովը պիտի քննէ անցնող չորս տարիներու Խորհուրդի աշխատանքները, ապա պիտի ճշդէ յառաջիկայ չորս տարիներու աշխատանքային ծրագիրները, ընտրելով նաեւ նոր Գործադիր վարչութիւն մը: Համաժողովի ընթացքին նաեւ պիտի ընտրուի նոր ընդհանուր քարտուղար մը յառաջիկայ չորս տարիներու համար:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ ժողովին պիտի մասնակցի պատուիրակութիւն մը, որուն մաս պիտի կազմեն Գերշ. Ս. Սեպուհ արք. Սարգիսեան (առաջնորդ Թեմերանի Հայոց Թեմին), Գերշ. Ս. Գեղամ եպս. Խաչերեան (առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմին), Գերշ. Ս. Նարեկ եպս. Ալիեմեղեան (վարիչ կաթողիկոսարանի միջեկեղեցական բաժանմունքին), Հուրի Ագեգեան (Հայկեան) եւ տոքթ. Անդրանիկ Աշենեան (Կիպրոսէն):

Յայտնեցաւ, թէ համաժողովի աշխատանքներուն եւ տրուելիք որոշումներուն ծիրէն ներս, անցնող երկու օրերու ընթացքին վեհափառ հայրապետի յայտնեցին Պէյրուսի մարտիներու Առաջնորդ Պուլոս Մաթար, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի ընդհանուր քարտուղար, Միացեալ Նահանգներու Եկեղեցիներու Խորհուրդի ներկայացուցիչ Տէյվիտ Ուիլքը: Վեհափառ հայրապետին հետ նաեւ կապեր հաստատեցին այլ պատասխանատուներ, կարգ մը հարցերու գծով վեհափառ հայրապետին կարծիքը ունենալու համար:

ՇԻՐԱԿ

ՏՊԱՐԱՆ • ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ

Առեւտրական Տպագրութիւն

Այցետոմսեր - Նամակի Թուղթեր - Պահարաններ Թողոցիկներ - Հաշիւեցոյցներ - Ստացագիրներ Որմազներ - Պիտակներ - Կնիքներ - Եւլ.

Միութենական եւ Դպրոցական Տպագրական Աշխատանքներ

Յայտագիրներ - Հրատարակումներ - Օրացոյցներ Վիճակացոյցներ - Վկայականներ - Տարեգիրքեր Պարբերաթերթեր - Եւլ.

Հարսանեական Քարտերու Ճոխ Հաւաքածոյ

Հարպոյեան Կեդրոն • Bloc C • Պուրճ Համուտ • Հեռ. 01 253008

Բնակարգի Աշխատանք • Սրագ Սպասարկութիւն • Սերտուած Գիներ

www.lemagan.com

ԱՅՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

AT HOME


- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory service,
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՅՈՐ ԳՐԱՆԵՆԵԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԵՆՈ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.



ԱՉԳԱԿ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵՑԻՔ «ԱՉԳԱԿ»ԻՆ

Վճարելով «Ազդակ»ի տարեկան բաժանորդագիրը, մեր ընթերցողները օրաթերթին հետ կը սպանան նաեւ

ԱՉԳԱԿ

Հարաբարեք, ամսական յաւելումներ «Պարիկ-Մարիկ»ը, «Անահիտ»ը, «Նախաարդ» ու «Ազդակ-ամսաթերթ»ը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿՐՆԱԲ ՎՃԱՐԵԼ ԱՍՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

«ԱՉԳԱԿ» օրաթերթ, Շաղպոյեան կեդրոն Հեռ. 01-260115, 01-241274, 01-258526 Fax : 01-258529 E-mail : aztag@jnc.com.lb website : www.aztagdaily.com

www.aztagdaily.com

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Այս նիւթը նախ եւ առաջ կարելի է համեստ սկիզբ նկատուելի Անատոլիայի Հայ Բեկորներու վիճակագրական, ժողովրդագրական, հասարակական եւ այլ հարցերու մասին աւելի խոր ուսումնասիրութեան եւ հետազոտութեան համար: Այս իմաստով հարկ է նախ տեսնել, թէ ո՞վ է Հայը... կամ՝ որո՞ւն կարելի է Հայ նկատել:

Այս հարցադրումը կրնայ թուիլ անիմաստ, ժամանակավրէպ կամ՝ շատուց լուծուած: Սակայն բաւական անհրաժեշտութիւն կը զգացուի նոր հազարամեակներուն ընթացքին, մէկ անգամ եւս ազգովին պատասխանելու այս էական հարցումին, դարձեալ բնորոշելու ազգ հասկացողութիւնը, որովհետեւ այսօր հայութեան գլխուն կրկին կը շողայ հայրենի անկախ պետութեան արեգակը: Անկախ հայրենիքի գոյութիւնը ինքնին կը թելադրէ վերատեսութեան ենթարկելը ցարք առկայ մեր ըմբռնումները:

Հետեւ չէ այն օրը, երբ Հայաստանի Ազգային ժողովը ընդունի երկազաբացիութեան մասին օրէնքը: Ի՞նչ չափանիշներով պիտի առջնորդուի օրէնսդիր իշխանութիւնը: Իրօք, որո՞ւն կարելի է շնորհել երկազաբացիութեան իրաւունքները...

Հարցումին կարելի է պատասխանել հողի պատկանելիութեան տեսութեամբ, որուն համաձայն նոյն հողին վրայ ծնողները կամ նոյն բնօրրանէն սերածները կը նկատուին նոյն ազգին պատկանողներ: Այս տեսութիւնը մեզ նման ցրուած ու քանակով փոքր ազգերու պարագային կ'ընդգրկէ շատ սահմանափակ շրջափոխ:

Հարցումին կարելի է պատասխանել նաեւ արեւն կապի տեսութեամբ, ըստ որուն ազգային պատկանելիութիւնը կը բնորոշուի արեւակ-ցական կամ ցեղային կապերով: Այս տեսութեան հիման վրայ, թէ եւ աւելի կ'ընդլայնի այդ հասկացողութեան սահմանումը, սակայն բաւական բարդ կիրարկման արժեքափեր կը պահանջուին:

Հարցումին կարելի է պատասխանել կիրարկման աւելի դիւրին չափանիշներ ենթադրող տեսութիւններով: օրինակ՝ լեզուական, անուանական կամ կրօնական պատկանելիութեան առանձին կամ իստան զանազան տեսութիւններ: Սակայն անոնք եւս նեղ ու սահմանափակ են, որովհետեւ այդ հիմնաւորումով ալ անորոշ կը դառնայ հայութեան մեծ մասի մը պատկանելիութիւնը: անոնք, որոնք հայրենի տիրապետութեան արարւածութեան բուն կամ նոյնիսկ ոչ բուն ձեւով գուրկ եղած են, անոնք, որոնք չունին մկրտութեան վկայագիր եւ անոնք, որոնք իրենց մականուններուն մէջ չեն կրեր «եան» վերջածանցը, փաստօրէն, պիտի մնան «սահմաններէն դուրս»...

Մենք քանակով այնքան ալ մեծ ազգ չենք, հետեւաբար, կանգնած ենք ազգը բնորոշելու յարմարագոյն տեսութիւն մը որդեգրելու հրամայականին առջեւ:

Այսպէս, մենք մեզ թոյլ կու տանք առաջադրել ազգային գիտակցութեան տեսութիւնը, որուն կառուցած եղած են ազգային գաղափարախօսութեան յարած շարք մը մտաւորականներ: Միջառն վարանդեանը, օրինակ՝ ազգային պատկանելիութեան ամենակարեւոր յատկութիւնը կը համարէ արեւնակցական, բնօրրանային, լեզուական եւ մշակութային գործոններու եւ էական տարրերու ընդհանուր հիման վրայ ստեղծուած ինքնութեան գիտակցութիւնը: Այսինքն՝ այն, որուն ինքը՝ մարդը կը գիտակցի իր ներաշխարհին մէջ եւ որուն կապուած է պատմական իրողութեամբ: Այս տեսութեամբ, այն որ ինքն իրեն հայ կը նկատէ, կը գիտակցի իր հայկական ծագումին կամ իրազեկ է իր հայկական արմատներուն, արդէն հայ է, անվիճելիօրէն հայ է, անկախ այն բոլոր հանգամանքներէն, թէ ո՞ր կը բնակի, ի՞նչ լեզուով կը հարգողակցի, ի՞նչ անուն կը կրէ կամ կրօնական ի՞նչ անյարիր հաւատամքի պարտադրուած է:

Ահա այն մօտեցումով, անխուսափելիօրէն կանգնած ենք յատկապէս թուրքերոյ մէջ ապրող մեր հայ եղբայրներու կենսավիճակն ու գոյութեան պայմանները լաւանկաբար ճանչնալու եւ ըստ այնմ յանձնառուութիւն կրելու պարտաւորութեան առջեւ:

Նման տեսական նախադրեալով միայն կարելի է քննել նիւթը եւ առանց անոր, ան յառաջագուհի դատաւարտուած է անիմաստութեան:

ԱՇԽԱՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ

Ներկայիս թուրքերու բաղկացած է 72 վարչատարածքային բաժանումներէ կամ մարզերէ, որոնցմէ 57ը կը նկատուին մեր ուսումնասիրութեան առարկան: Այս 57էն մտաւորապէս 18ը կը համընկնին Ուլիսթեան իրաւարարութեամբ Արեւմտեան Հայաստանի, իսկ մօտաւորապէս 9ը՝ Հիւսիսային Բիւրստանի սահմաններուն հետ: Համարեա 7ը կարելի է առանձնացնել իրրեւ Պատմական Կիլիկիոյ սահմաններ եւ միւս 23ը՝ իրրեւ կեղծոնական Անատոլու:

Ահա Անատոլուի այս չորս տարածքներուն մէջ ներկայիս կ'ապրին հայեր, որոնց քանակի մասին ընդհանրապէս եւ ազգային գիտակցութեան մակարդակի կապակցութեամբ մասնաւորաբար, ցաւօք չկան հարուստ տեղեկութիւններ:

Այնուամենայնիւ, եղածով բաւարարուելով, կրնանք որոշ պարզահասկութեամբ, Անատոլուի հայութեան հասարակական կենսութեան մասնակարգականօրէն դասակարգել հանգրուանային

ԱՆԱՏՈՒՄԻ ՀԱՅ ԲԵԿՈՐՆԵՐԸ

հետեւեալ շրջաններուն:

ԱՌԱՋԻՆ ԵՐՁԱՆ (1923-1938)

Աթաթուրքեան այս շրջանին հայութիւնը գտնուած է յետեղեռնեան հոգեվիճակի մէջ եւ հիմնականին մէջ գոյատեւելու ելքեր որոնած է: Լօզանի դաշնագրի շարք մը տրամադրութիւնները կը պարտաւորէին Քեմալ Աթաթուրքին՝ մեղմ եւ զգուշ վերաբերմունք ցուցաբերելու կրօնական փոքրամասնութիւններու հանդէպ:

Հայկական աղբիւրներու համաձայն, Արեւմտեան Հայաստանի էրզրում, Վան, Պիթիւս եւ Տրապիզոն վիլայէթներուն մէջ 1914ին աւելի քան 705 հազար հաշուող հայ բնակչութեան 1922ին գոյատեւած է մօտաւորապէս 63 հազարը: Նոյն ժամանակաշրջանին, Հիւսիսային Բիւրստանի Տիւրպէթի եւ Էլազիկ վիլայէթներուն մէջ 328 հազար բնակիչներէն մնացած է 38 հազարը, պատմական Կիլիկիոյ եւ Հիւսիսային Սուրիոյ 309 հազար բնակիչներէն 70 հազարը, իսկ Կեղերոնական Անատոլուի Սվազ վիլայէթին մէջ եւ այլուր 596 հազարէն՝ մօտաւորապէս 44 հազարը: Հայկական այս աղբիւրին մէջ ակնարկ չկայ իսլամացած հայութեան քանակին մասին⁽¹⁾:

Այսպէս կարելի է ամփոփել նախնական պատկերը:

Տարածաշրջան	1974թուական	1922 թուական
Արեւմտ. Հայաստան	705.000	63.000 (9%)
Հիւսիս. Բուրստան	328.000	38.000 (12%)
Պատմ. Կիլիկիա	309.000	70.000 (23%)
Կեղերոնական Անատոլիա	596.000	44.000 (7%)
գումար	1 938 000	215 000 (11%)

«Ակօս» շաբաթաթերթի խմբագրապետ Հրանդ Տինք, իր հարցազրոյցներէն⁽²⁾ մէկուն մէջ, թուրքերոյ հանրապետութեան հիմնադրման ժամանակ Անատոլուի հայ բնակչութեան (բացառեալ իսլամացած հայերու) քանակը կը գնահատէ աւելի քան 170 հազար:

Թուրքերոյ մէջ հրատարակուող «Ռատիբալ» թերթի աշխատակից Եահյան Գոշօղլու մնացորդացի մասին հետաքրքրական տեղեկութիւն մը կու տայ, ըստ որուն «... Տարիներէ ի վեր բանավէճերիւ զարձած է այն, որ քանի՞ հոգի մեռած է տեղահանութեան ընթացքին: Մէկ բան ստոր է. տեղահանութեան ետք հայ բնակչութեան թիւը մօտաւորապէս 600 հազար է: Յայտնի չէ, թէ իսլամ ընտանիքներու կողմէ որդեգրուած հայ երեխաներու թիւը ի՞նչ է, բայց ծանօթ է, որ այս թիւն ալ շատ բարձր թիւ մըն է»⁽³⁾:

Պատմական այլ վկայութեան մը համաձայն⁽⁴⁾, 1929-30 թուականներուն միայն իւրբերդէն (էլազիկ) եւ Տիգրանակերտէն (Տիւրպէթի), տեղահանուած են աւելի քան 30 հազար հայեր (ուշագրու է, որ մինչ այդ Տիգրանակերտը ունեցած է եկեղեցական հովուական, որ դաշուհանարուած եւ սպաննուած է եօթ թուրք զինուորներու միջոցով): Նման վկայութիւններ մտածել կու տան, որ վերապրող հայութեան քանակը աւելի բարձր եղած է, քան՝ այն, որ կը ներկայացուի թրքական եւ հայկական պաշտօնական աղբիւրներու մէջ:

Պէտք է նշել նաեւ, որ այս շրջանին թուրք-Ֆրանսական համաձայնութեան լոյսին տակ, հետեւողական քայլեր առնուեցան պատմական Կիլիկիան վերջնականապէս հայաթափելու ուղղութեամբ, բայց այս անգամ ոչ թէ վարագ պայաններու, այլ՝ բռնագաղթի միջոցով⁽⁵⁾:

Քեմալի իշխանութեան վերջին տարիներուն, երբ արդէն աստիճանաբար զգալի կը դառնար ինչօնիսի տիրապետութիւնը, տեղի ունեցած է որոշ քանակութեամբ տերսիսի հայերու թափուցում վերադարձը՝ Հայէպէն Տերսիս (Թունչլի), որ իրականութեան մէջ հանդիսացած է եւ կը հանդիսանայ Ալեքի ցեղախումբերու բուն բնակավայրը: 1937-38 թուականներուն, Տերսիսի արեւելական պատմամրուութիւններու ընթացքին, գործուած դեր ունեցած է այնտեղ վերադարձ եւ վերաբնակուած հայութիւնը⁽⁶⁾:

1. Այս թիւերը առնուած են «Հայկական Յեղասպանութեան Թանգարան»ի համացանցային կայքէջէն (http://www.armenocide.am/genocide_museum.htm), ուր Օսմանեան Կայսրութեան հայ բնակչութեան 1914 եւ 1922 թուականներու վիճակագրութեան պատկերները ներկայացուած են ըստ հետեւեալի:

Շրջան	Ընկալութիւնը 1914 թուին	Ապանուած կամ տեղահանուած 1 500	Բնակչութիւնը 1922 թուին
Էրզրում	215 000	186 000	500
Վան	197 000	121 000	3 000
Պատմական Կիլիկիա	204 000	169 000	35 000
Թիւրք	220 000	164 000	56 000
Սվազ	225 000	208 200	16 800
Տրապիզոն	73 390	58 390	6 000
Արեւմտեան Անատոլիա	371 800	344 800	27 000
Կիլիկիա եւ Իւստանոյի Սիւրիա	309 000	239 000	70 000
Երասխան Թաւրիս	194 000	31 000	165 000
Գումար	2 133 190	1 745 390	387 800

2. «Armenians And Turkey: Shared History», http://turkishdailynews.com/old_editions/09_18_96/

feature.htm.

Այս հարցազրոյցը առնուած է թրքական լրատուութեան համացանցային կայքէջէն, ուր Հրանդ Տինք հայտնութեան քանակին մասին կը ներկայացնէ հետեւեալ բացատրութիւնը. «...Հայ բնակչութիւնը, որ կը հաշուէր 170 հազար Անատոլուի մէջ եւ 130 հազար Պոլսոյ մէջ՝ Թուրքիոյ հանրապետութեան հիմնադրութեան ժամանակ (եւ չեմ հաշուէր ձուլուած բնակչութիւնը, որուն թիւը անյայտ է), ներկայիս 50-60 հազար է»:

3. «Նոր Մարմարա» թիւ 16432, 27 Յուն. 2003, Պոլիս:

4. Dr. Hofmann, Tessa, «Armenians In Turkey Today», Հոկտեմբեր 2002, էջ 15: Դոկտ. Հոֆմանի այս արժեքաւոր աշխատութեան մէջ կը հանդիպինք անգլիացի պատմաբան Քրիսթաֆըր Ուաքըրի հետեւեալ մէջբերումին. «Պոստալի յոյները (Տրապիզոն գաւառին մէջ) դաժանօրէն կը հալածուէին 1922-24 թուականներուն: Նմանաբար բնաջնջուեցաւ եւ այդ շրջապատին մէջ հայերը ճորագոր յարձակումներու ենթարկուեցան»:

«1929ի ամիսին եւ յաջորդ ամիսներուն սկսաւ հայ գիւղացիներու եւ արհեստարարներու մտադրողներու խիստ տեղահանութիւնները»:

«Այդ ժամանակ 30 հազար հայեր արտոնուեցան». կը գեկուցէ բրիտանացի հիւպատոս Մուր Մէլսըըը, 14 Նոյեմբեր 1929ին: «Փայտաւանները կը ժամանէին յաջորդող վեց ամիսներուն՝ Խարբերդէն, Տիւրպէթիէն եւ Մարտիէն»:

«Անոր կարծիքով, թրքական կառավարութեան մշակած քաղաքականութիւնը բոլոր քրիստոնէական տարրերէն անատոլիական գաւառները ազատել է՝ բացարձակ շարքերու միջոցով: «Ամբողջ ընտանիքներ հիւանդ են», կը մէջբերէ խարբերդցի հայու մը խօսքերէն: «Թուրքիոյ մէջ այսօր մեծ գոյութեան միջոցներ չունինք, մեզ կը հալածեն, կը թալանեն, կը նետեն բանտերը եւ թէլ բախտերնս բռնէ՝ կ'արտաքսեն: Ռուսը կը նետեն հայկական եկեղեցիներէն Անթու, իսկ Տիւրպէթիի հայ եպիսկոպոսին սպաննած էին եօթ հարրած զինուոր»: 1929-1930 թուականներուն տեղահանութեամբ մտատար հաշիւը կը կազմէ 30 հազար:

5. «Քուլիս», թիւ 1022, Փետրուար 1990, Պոլիս, էջ 22-24, եւ թիւ 1023, Մարտ 1990, էջ 38-41.

«Ջուտ» հայաբնակ գիւղը՝ Վազը՝ յօդուածի հեղինակը այսպէս կը բնութագրէ Կիլիկիոյ հայաթափումը. «Այս օրերուն, իսկէնտերուն՝ Հայթայի շրջանի հայ եկեղեցիները եւ հայութիւնը մամուլի եւ հետախուսի ճիւղ ղարձած են, ի մասնաւորի Վազը գիւղը, որ այսօր աշխարհի վրայ բացի ներկայ Հայաստանէն, միակ գոյտ հայաբնակ գիւղն է: Վազը գոյտ հայաբնակ գիւղը Սուլեյմանի (Սամանտաղ) Մուսա Էրեան ստորոտին շարքում վեց հայաբնակ գիւղերէն ամենափոքրն էր:

«Ջուտ հայաբնակ այս վեց գիւղերը... շարունակած են իրենց կրօնը, ազգութիւնը, եւ անհնդդիները՝ առանց ժամանակակից իշխանութիւններուն եւ անձերուն գլխացաւ պատմանելու: Անոնք միշտ բարձր պահած են իրենց արժանապատուութիւնը՝ լաւ ու բարեկամական յարաբերութիւններ մշակելով շրջանին մէջ գտնուող բոլոր ժողովուրդներուն հետ: Հետեւեալ տեղեկութիւնները գաղափար կու տան այս վեց հայաբնակ գիւղերուն մասին, քաղուած 1919 թուականի արձանագրութիւններէն:

- 1. Պիթիսա (Պաթըրայազ) 195 ընտանիք՝ 1050 անձ
- 2. Հաճի Հապշի (Էրիթ Բեոյ) 257 ընտանիք՝ 1284 անձ
- 3. Եօղուձուլու 255 ընտանիք՝ 1233 անձ
- 4. Խըլտըր Պէկ 145 ընտանիք՝ 1149 անձ
- 5. Վազը՝ 82 ընտանիք՝ 470 անձ
- 6. Քէպասիէ 251 ընտանիք՝ 1125 անձ

«1924 թուականին, այս վեց հայաբնակ գիւղերը բաժանուեցան Սուլեյման գաւառակէն: Գաւառակ մը կազմուեցաւ Քրանսակա իշխանութիւններու ծրագրի համեմատ, որ անի անկախ էր համեմատաբար եւ սակայն, երբեմն գործածուեցաւ ֆրանսական շահերու եւ հաշիւներու համար: «...Հասաւ 5 Յուլիս 1938 թուականը: Թուրք բանակը, համաձայնութեամբ Փրանսակա իշխանութիւններուն, գօրծափ Ծիւրքի Գանաթըլի հրամանատարութեամբ հասաւ Անթաքիա, կազմուեցան Հաթայի Հանրապետութիւնն ու Խորհրդարանը, որուն մաս կազմեցին մեր Մուսա Էրեան անունով Քէպասիէ գիւղէն Յակոբ Դալիքեան եւ միւս շրջաններու անունով Եսայի Գայանեան...»

«...23 Յուլիս 1939 թուականին, 32.500 հայերու գաղթէն ետք, մնացողները Վազը գիւղէն էին...»:

6. Mgrtn van Bruinessen, «Genocide In Kurdistan? The Repression of the Dersim rebellion in Turkey (1937-89) and the chemical war against the Iraqi Kurds (1988)»

Սոյն աշխատութեան մէջ, կարեւոր տեղեկութիւններ կան տերսիսի հայերու վերադարձին մասին. «...Հիմնուելով իրականութիւններու մանրամասն ռազմական ուսումնասիրութիւններու վրայ տերսիսահայերը, որոնք վերապատ էին հայկական շարքերը եւ կ'ապրէին Անտիոլ մէջ, քիւրտ ազայականներու հետ վերադարձան

շրջան եւ յաջողութեամբ ցեղախումբերուն հրահրեցին պատասխանութեան...»

«...Տերսիսը Արեւելեան Թուրքիոյ լեռնային անմատչելի վայր մըն է: Ան բնակեցուած է մեծ թիւով փոքր ցեղախումբերով, որոնց հիմնական գրադմուքը անասնապահութիւնն է: Անոնց ընդհանուր թիւը 1930ականներուն կը կազմէր 65-70 հազար: Տերսիսը Գիւրտիստանի մշակութային կեդրոնն է: Մէկ մասը կը խօսի քրտերէն, բայց մեծամասնութիւնը, սակայն կը խօսի լեզուով: Բոլորը կը յարին այդպէս Ալեքի աղանդին, որ զանոնք կ'առանձնացնէ Արեւելքի եւ Հարաւի մէջ ապրող քրտերէն...»:


Կ. Խ.

«Իրօշակ»

(Շար. 1)

ԼՈՒՐԵՐ՝ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԷՆ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՐՁԱՆԱԿԻՆ ԿԵՐՁ ԴՆԵՒՈՒ ԿՈՉ՝ ՓՈՍԹԵԼԱՐՏԵՐՈՒ ՄԻՋՈՑՈՎ



Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնախումբը հարգողեց, որ ձեռնարկած է բացկիւններու յայնածաւալ արշաւի մը՝ կոչ ուղղելով Քոնկրէտի ղեկավարութեան, որ դրական կեցածք որդեգրէ Միացեալ Նահանգներու կողմէ ՄԱԿի Յեղասպանութեան Ուխտի որդեգրման 15 ամեակը ոգեկոչող Յեղասպանութեան բանաձեւին: Ինչպէս նախապէս նշած ենք, այս բանաձեւը կ'ընդգծէ ապագայի ցեղասպանութիւններ կանխարգիլելու համար անցեալին կատարուած ցեղասպանութիւններէ դասեր քաղելու անհրաժեշտութիւնը: Այս իմաստով, բանաձեւը կ'անդրադառնայ անցեալին տեղի ունեցած ցեղասպանութիւններու, որոնց շարքին՝ Հայկական Յեղասպանութիւնը, Ողջակիզումը, Ռուստայի եւ Քամպուտիոյ կոտորածները եւ այլ ցեղասպանութիւններ:

Շար.՝ էջ 8

ՔԵՂԷՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՐ ՀԱՅՅԱՍԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԶՄԱՆ ՕՐԷՆՔԻՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՄԻԱԶՄԱՆՈՒԹԵԱՄԲ ՈՐԴԵԳՐԵՑ

Քանատայի Հայ Դատի Յանձնախումբի տարիներու հետեւողական աշխատանքէն ետք, 19 Նոյեմբեր 2003ին, Քեպէքի Ազգային ժողովի նիստը միաձայնութեամբ որդեգրեց Հայկական Յեղասպանութեան ճանաչման թիւ 194 օրէնքի սկզբունքը:

Առաջարկը ներկայացուց Աքատի շրջանի ազատական երեսփոխան Իվան Պորալօ, որ իր խօսքին մէջ պատմականը կատարեց Հայկական Յեղասպանութեան եւ շեշտեց անհրաժեշտութիւնը այս օրէնքը որդեգրելու: Պորալօյի խօսքին յաջորդեց ընդգիծութեան միջազգային հարցերու քննադատ՝ Տանիէլ

Միջազգային Քաղաքական Կեանք

ՎՐԱՅԻՔ ՄՏԱՀՈՎՊՄՈՍԿՈՒԱՅԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՎ

Վրաստանի անջատողական երեք շրջաններում դեկտեմբերը Մոսկուայի մէջ Հանդիպումներ կ'ունենան ուսու պաշտօնատարներու հետ: Այս հանդիպումները Հարցումներ կը բարձրացնեն Մոսկուայի նպատակներուն եւ Վրաստանի մէջ Հաւանական անկայունութեան նկատմամբ անոր կեցուածքին շուրջ:

«Երբ նման հանդիպումներ կը կատարուին առանց տեղեակ պահելու Վրաստանի իշխանութիւնները, թիֆլիս բնակաւայրու կը գայրանայ», ըսաւ անցումային նախագահ Նինո Պուրցիաշուի անցեալ Շաբաթ օր:

Հանդիպումները եւ թիֆլիսի մէջ անոնց գտած արձագանքները պատճառ դարձան, որ երկու դրացիներուն միջև յարաբերութիւնները բարդ սկիզբ մը ունենան, միայն արտաքին երկրներու օրինակները արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով միջամտեց թիֆլիսի մէջ իշխանութեան խաղաղ փոխանցում մը կատարելու գծով:

Ռուսները անցեալ քանի մը օրերուն ոչ յստակ նշաններ կ'ուղարկեն թիֆլիս: Անոնք կ'ըսեն, թէ կ'ուզեն կայունացնել Վրաստանը, սակայն միեւնոյն ժամանակ Հարցականի տակ կ'առնեն ղեկավարութեան օրինակաւորութիւնը: Նոր ղեկավարութիւնը «յեղափոխութեամբ» իշխանութեան հասաւ, երբ հետադարձ Շեւարտաձէ խաղաղ ցոյցերու ճնշումին տակ Հարկադրուեցաւ հեռանալ իր պաշտօնէն:

Վրաստան յայտարարած է, թէ 4 Յունուարին տեղի պիտի ունենան նախագահական ընտրութիւններ:

Մոսկուա մտահոգութիւն յայտնած է ընդդիմութեան նեցուկ կանգնելու ամերիկեան կեցուածքին նկատմամբ, եւ ընդդիմութեան ղեկավարները աւելի ամերիկամէտ կը թուին ըլլալ, քան նախկին նախագահը: Մինչ Շեւարտաձէ խորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան փոխթիֆլիսի անդամ եղած է անցեալին, իր հաւանական յաջողութիւնը Միխայիլ Սաակաշուի, Միացեալ Նահանգներու մէջ փաստաբանութիւն ուսանած է:

«Ժամանակը ցոյց պիտի տայ, թէ որո՞ւն չահերը պիտի ուղղեն Վրաստանի իշխանութիւնը: Միացեալ Նահանգներուն, թէ վրացի ժողովուրդին», ըսաւ Սերգէյ Փրիկոտօր, Ռուսիոյ նախագահի բանբերը՝ աւելցնելով. «Վրաստանի նախագահը պիտի ընտրուի Վրաստանի մէջ, եւ վստահաբար ոչ՝ Մոսկուայի»:

Հիւսիսային Հանրաձայնութիւնը վերջումը ըսաւ, թէ յստակ չէր տակաւին, թէ Մոսկուայի յարաբերութիւնները Վրաստանի հետ ինչ ընթացք պիտի ունենան:

Եթէ Ռուսիա Միացեալ Նահանգներու նկատմամբ հալածախտի իր աւանդական զգացումներով եւ Վրաստանի ներքին հարցերը շահագործելու մտածումներով առաջնորդուի, կրնայ Վրաստանը փորձել անկայուն պահել, ըսաւ ան:

Անջատողական երեք շրջանները արդէն որոշ անկայունութիւն մը կը ստեղծեն երկրին մէջ: Այդ շրջանները տեւաբար Ռուսիոյ օգնութեան կը դիմեն եւ Քրեմլին իր ազդեցութիւնը կրնայ գործածել կացութիւնը հանդարտեցնելու կամ սպառնալու նպատակով համար:

Այդ շրջաններէն երկուքը՝ Աբխազիա եւ Հարաւային Օսեթիա, 1990ականներէն ի վեր կը գործեն իրրեւ անջատ պետութիւններ: Անոնք Վրաստանէն բաժնուեցան Ռուսիոյ օգնութեամբ, սակայն միջազգային ճանաչում չեն վայելել: Անոնք Ռուսիոյ սահմանակից են եւ անոնց բնակչութեան մէկ մասը վրացիներ չեն:

Աբխազիան, որ կը գտնուի Սեւ ծովուն վրայ, 1993ին անջատուեցաւ Վրաստանէն 13 ամիս տեւող պատերազմէ մը ետք, որուն ընթացքին 10 հազար հոգի սպանուեցաւ: Երկրի վարչապետին՝ Ռաուլ Խատաբիայի համաձայն, երկրի 320 հազար հաշուող բնակչութեան 120 հազարը ռուսներ են:

Մոսկուայի մէջ ան յայտնեց, թէ իր զինեալ ուժերը պատրաստ են որեւէ վրացական յարձակում ետ մղելու: Ան նաեւ ըսաւ, թէ Աբխազիոյ մէջ գտնուող ռուսական խորհրդարանի պիտի շարունակէ մնալ հոն՝ իրրեւ երաշխիք Աբխազիոյ ինքնավարութեան:

Հարաւային Օսեթիա կը ձգտի միանալ հիւսիսային Օսեթիոյ: Երկու շրջանները բաժնուած էին Ստալինի կողմէ: Երկրին նախագահը, Էտուարտ Քոյիթի կ'ըսէ, թէ բնակչութեան 60 առ հարիւրը ռուսական անցազրներն են:

Մոսկուայի մէջ ան յայտնեց, թէ Հարաւային Օսեթիա մորապնդած էր իր սահմանը՝ վախճալով, որ Վրաստան կրնայ յարձակումով մը վերատիրանալ անջատուած շրջանին:

Ամէնէն հանդարտ Ասլան Ապաշիձէն է, որ վերջերս ինքզինք Աճարիոյ նախագահ յայտարարեց: Աճարիա անկախութիւն չէ յայտարարած, սակայն ինքնավար կը գործէ:

Ապաշիձէ մետաստերոզ պահուել փորձեց օգնել Շեւարտաձէի, սակայն իր քայլը պարզուեցաւ, որ սխալ ռազմավարութիւն էր: Ան այժմ փակած է Վրաստանի հետ իր սահմանը:

«Կարելի չէ կայ հաստատել ապօրինի կերպով իշխանութեան հասնողներուն հետ», ըսած էր ան Շեւարտաձէի հեռազրուէին ետք:

Ապաշիձէ կրնայ բարդացնել յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները, եթէ շահագործէ Աճարիոյ քուէն, ինչպէս որ ըրաւ 2 Նոյեմբերին, երբ աւելի քուէներ տրուեցան, քան քուէարկելու իրաւունք ունեցող քաղաքացիներուն թիւը:

ՔՈՒՊԱ ԿԸ ՎԱՃԱՌԷ ԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԻՐՔԵՐԸ

Չարգացող աշխարհին նաեւ Միացեալ Նահանգներուն մէջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐ

Միջազգային դեղորայքի ռուկային մէջ ամուր դիրք ունենալու Քուկայի փորձերը միջոց հանդիպած են առեւտրական եւ քաղաքական արդիւններու ամերիկեան առեւտրուկի ամերիկեան առեւտրուկի: Այս ընկերվարական կղզիին ուժը կը կայանայ ոչ իր առեւտրական եւ արտածումի վարպետութեան մէջ այլեւ իր արտադրութիւններու բարձրորակ ըլլալուն մէջ:

Վերջին քանի մը տարիներուն քուկայական կենսա-տարրութիւններու բարձրորակ ըլլալուն մէջ:

Վերջին քանի մը տարիներուն քուկայական կենսա-տարրութիւններու բարձրորակ ըլլալուն մէջ:

Քուկայի առողջապահական ցուցանիշները համեմատելի են Արեւմտեան եւրոպայի չափանիշներուն: Քուկայի առողջապահական ցուցանիշները համեմատելի են Արեւմտեան եւրոպայի չափանիշներուն: Քուկայի առողջապահական ցուցանիշները համեմատելի են Արեւմտեան եւրոպայի չափանիշներուն:

Ներկայիս արտածումներու եւ ծառայութիւններու մարզին մէջ բժշկութիւնը կը գրաւէ ճիշդ դիրքը, երկրին տրամադրելով 2002ի տուեալներով տարեկան 250 միլիոն տոլարի արտաքին դրամագումար, որուն 150 միլիոնը կու գայ կենսա-տարրութիւններէն:

ԱՌՈՂՋԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

Եկամուտի ուրիշ աճող աղբիւր մըն է առողջապահական զբօսաշրջութիւնը շնորհիւ օտար այցելուներու համար՝ յատուկ հիւանդանոցներու եւ բուժարաններու գոյութեան:

Անցեալ տարի աւելի քան հինգ հազար օտար հիւանդներ այցելեցին Քուկայ քուկայական համար զանազան հիւանդական տարրալուծարաններ:

1989ին խորհրդային օտարակցութեան կասեցումէն եւ 1990ականներու տնտեսական սուր տազնապէն ի վեր, Քուկայ գարկ տուած է իր բժշկագիտական հիմնարկութիւններու զարգացման իրրեւ հիմնական աղբիւր բժշկական նոր արտադրութիւններու արտածման:

Քուկայի առաջին մեծ իրագործումը եղաւ 1980ականներուն մենեւ-ճայթիս-Պի հիւանդութեան պատուաւր (patent): Պատուաւր մեծ դեր ունեցած է հարաւային Ամերիկայի երկրներուն մէջ, յատկապէս Պարագիւի եւ Արժանտինի, համաճարակներ կասեցնելուն մէջ:

Պատուաւր ներկայիս արտօնագրուած է «Կլաբ-սո Սմիթ Քլայն» ընկերութեան մօտ եւ մօտիկ ապագային պիտի վաճառուի Եւրոպայի մէջ եւ հետագային հաւանաբար ընկերութիւններ:

Քուկայի դեղորայքի ճարտարաբանութեան աւելի քան հինգ հարիւր բժշկական արտադրութիւններուն, որ 1980ական թուականներուն երկրի ներքին պէտքերուն շուրջ ութ-սուն տոկոսը կը բաւարարէր:

Ներկայիս անթիպայոթիքներու եւ այլ դեղորայքի ճարտարաբանութեան աւելի քան հինգ հարիւր բժշկական արտադրութիւններուն, որ 1980ական թուականներուն երկրի ներքին պէտքերուն շուրջ ութ-սուն տոկոսը կը բաւարարէր:

տակաւին չի համեմատիր 1980ականներու մակարդակին:

Շատ մը դեղեր հիւանդանոցներուն կը մատակարարուին միջազգային օժանդակութիւններու ճամբով աշխարհի մէջ գոյութիւն ունեցող Քուկայի Զօրակցութեան Համախմբումին միջոցաւ:

ՄԱՅՅԱԼ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Արեւմտեան շուկաներէն ներս թափանցելու Քուկայի դիմադրուած արգելքները պատճառ դարձան են, որ ան միացեալ ընկերակցութիւններ կազմէ ուրիշ երկիրներու հետ եւ ներկայիս ան կը գերազանցի քանտակաւ, գերազանցան եւ սպանական ընկերութիւններու հետ:

Վիզի եւ կուրծքի քաղցկեղներու բուժելու քուկայական արտադրութիւնները մեծ աղմուկ բարձրացուցած են համաշխարհային կենսաճարտարաբանութիւններէն:

Քուկայի կրնայ աղբար ըլլալ կենսապային չափանիշներով սակայն իր բժշկութեան մարզը լաւ ցուցանիշ է իր մարդուփ ու փորձարկումները ինչպէս նաեւ ճիշդ բժշկական ուսումնասիրութիւններն ու փորձարկումները ինչպէս նաեւ ճիշդ բժշկական ծառայութիւններ մատուցել:

Ներկայիս արտածումներու եւ ծառայութիւններու մարզին մէջ բժշկութիւնը կը գրաւէ ճիշդ դիրքը, երկրին տրամադրելով 2002ի տուեալներով տարեկան 250 միլիոն տոլարի արտաքին դրամագումար, որուն 150 միլիոնը կու գայ կենսա-տարրութիւններէն:

Սակայն, եթէ «Թերա-Սիմ էյժ - Առ3»ը վաւերացւի անիկա պիտի դառնայ քաղցկեղի բուժման հիմնական դեղը Եւրոպայի մէջ յառաջիկայ շրջանին տարիներուն տարեկան երեք միլիար տոլար եկամուտ ապահովելով:

Երկար ժամանակի վրայ կենսաճարտարաբանութիւնները մէջ Ֆիտիլ Քասթրոլի ըրած մեծ ներդրումը կրնայ վերջապէս մեծ շահեր ապահովել եւ բարելաւել երկրին տնտեսութիւնը:

Այդ մէջը նաեւ մեծ գոհունակութիւն կու տայ քուկայի գիտնականներուն գիտնալով, որ իրենց աշխատանքը արդիւնաւէտ է եւ յաջողութեամբ կ'ողջնուի համաշխարհային շուկային մէջ:

ԹՈՄ ԼՈԹՈՐՓ

Պ. Գ. Ս. Ի.

ՊԱՐՏԱԴՐՈՒԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԵՒ ԿԱՄԱԻՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

Մեծամասնութիւնը աշխարհի պետութիւններուն ըլլան անոնք մեծ թէ փոքր, ընդամենը Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուլ կրտսերի ահաբեկչութեան դէմ շղթայագործուած համաշխարհային պատերազմին մասնակցելու հրահրին, զոր նախագահը ուղղած էր 11 Սեպտեմբեր 2001ին Միացեալ Նահանգներու դէմ իրագործուած ահաբեկչական յարձակումներէն կարճ ժամանակ ետք: Այդ պետութիւնները ընդամենաւ կամ համոզուածով, կամ պարտադրուած, եւ կամ Միացեալ Նահանգներու նախագահին յայտարարած այն կոպիտ հասկացողութեան, թէ՛ «ով որ մեր կողքին, չէ՛, մեր դէմն է»:

Այստեղ իրարու յարողող հարցականներ կը ծագին: Ահաբեկչութեան դէմ պատերազմին սկիզբէն շուրջ երկու տարի ետք, արդեօք աշխարհը աւելի՞ ապահով դարձած է: Արդեօք ահաբեկչութեան ալիքը մեղմացած է: Արդեօք ահաբեկչութեան ողնասիւնը կտրուած է: Արդեօք սահմանափակում է են այն տարածութիւնները, որոնց վրայ ահաբեկչները իրենց գործունէութիւնը կը տանին: Ամերիկեան բոլոր տուեալները ժխտականօրէն կը պատասխանեն այդ հարցումներուն, եւ ընդհակառակն, կը հաստատեն, թէ «ահաբեկչութեան չար ոգին» դուրս ելած է իր արգելաբանից, եւ տակաւին չէ վերադարձած անոր: Ամերիկեան հրապարակային յայտարարութիւնները, որոնք կը կատարուին բարձրագոյն մակարդակներուն վրայ, կը զգուշացնեն ամբողջ մոլորակին տարածքին իրագործուելու: Աշխարհի տարածքին գտնուող ամերիկացիներուն ուղղուած Ուաշինկթընի կոչերը զանոնք կը մղեն յաւելեալ զգուշաւորութեան իրենց բնակարաններուն մէջ կիսաբանարկեալ վիճակի մը մէջ ապրելու ատիճակ: Նախագահ Ճորճ Պուլ կրտսերի՛նք, իր ճառերը յաճախ կը խօսուի ապահով զօրանոցներուն մէջ, իսկ իր արտաքին շրջապայութիւնները յատկանշուած կ'ըլլան ապահովական աննախադէպ միջոցառումներով:...

Ամերիկեան վարչաձեռնարկի բարձրատիճան ներկայացուցիչներուն մեծամասնութեան մօտ ներկայիս տիրող կարգախօսքը պահուելուն ու անյայտանալն է: Փոխ նախագահ Չէյնի բացակայ է հրապարակէն եւ հազուադէպօրէն կը յայտնուի հանրային միջոցառումներու ընթացքին, իսկ իր բնակութեան վայրը գաղտնի է: Պաշտպանութեան նախարար Ռամսֆիլդտ խիստ սահմանափակած է իր շրջապայութիւնները եւ ճամբորդութիւնները: Պաշտպանութեան փոխ նախարար Ուոլֆօրթից անյայտացած է Պաղտատի մէջ իր դէմ լարուած պայթումի մը փորձառութիւնը ապրելէ ետք:

Մեծամասնութիւնը այն սկզբունքներուն, որոնց վրայ նախագահ Ճորճ Պուլ կրտսեր մշակած է իր իշխանութեան ռազմավարութիւնը, սկսած է հերթաբար ձախողի: Պուլի որդեգրած առաջին սկզբունքը ամբողջ աշխարհին վրայ տիրող ամերիկեան կայսերական իշխանութեան մը հաստատումն էր: Մտաւորականներու, քաղաքագէտներու, ընկերաբաններու եւ պատմաբաններու մեծամասնութիւնը կը հաստատէ, թէ կայսերական մտածելակերպը չի համապատասխաներ արեւմտեան ժողովրդավարութիւններուն ոգիին: Իրաքի դէմ ամերիկեան ներխուժումը առաջին քայլն էր նոր կայսրութեան հիմնաքարը դնելու ամերիկեան ռազմավարութեան: Սակայն օրէ օր յայտ կու գայ, թէ այս հիմնաքարը որք պիտի մնայ եւ պիտի չվերածուի պատերազմ, տանիքի եւ ամուր բնակարանի, եւ թէ ամերիկեան վարչաձեռնարկն ինք սկսած է նահանջել իր սկզբնական կեցուածքներէն:

Պուլի վարչաձեռնարկն այլեւս չի խօսիր շրջանին մէջ օրինակ հանդիսանալիք «ժողովրդավարական իրաք»ի մը մասին: Միացեալ Նահանգներու ամբողջ մտահոգութիւնը ներկայիս այն է, որ Իրաք չվերածուի աշխարհի ահաբեկչութեան կեղծոյնին:

«ԱՆՈՒՐ» ԱՌԱՖ ԸՄԻՈՐ

ԼՈՒՐԵՐ՝ ՄԻԱՅՏԱԼ... Ծարուակուած՝ 5րդ էջէն

Հայ Դատի Յանձնախումբին պատրաստած բացիկները, որոնք վերջիվերջեց պատրաստութիւններէն եւ մարդկութեան դէմ այլ ոճիրներէ նկարներ կը պարունակեն, կոչ կ'ուղղեն «օժանդակել Յեղասպանութեան շրջանակին վերջ դնելու» զօրակցելով Յեղասպանութեան բանաձեւին: Անոնք մասնաւորաբար կոչ կ'ուղղեն ներկայացուցիչներու ճան նախագահ Տէնիս Հասթըրթի եւ Հանրապետականներու ինքնակազմի նախագահ Պիլ Ֆրիսթի, որ իրենց համապատասխան մարմիններուն մէջ քուէարկութեան դնեն բանաձեւը:

Անցողի քարտուան ընթացքին, բացիկները բաժնուած են Միացեալ Նահանգներու տարածքին գտնուող բոլոր ամերիկահայերուն: Անոնց ընկերակցող նամակի մը մէջ Հայ Դատի Յանձնախումբի ստացողներէն կը խնդրէ այցելել յանձնախումբի համացանցի կայքը՝ ծերակուտակներուն եւ ներկայացուցիչներու ճան անդամներուն ֆաքս մը զրկելու եւ քաղաքները, որ զօրավիզ կանգնին բանաձեւին:

Նշեք, որ բացիկները կարելի եղած է պատրաստել շնորհիւ ամերիկահայերէ կազմուած «Միտում ԱՖ Է Տաուն» երաժշտական խումբի նախաձեռնութեամբ: Խումբը նախապէս այլ ռազմավարական նպատակներով աշխատած է Հայկական Յեղասպանութեան ճանաչում ապահովելու գծով:

«ԻՆԹԵՐՆԵՇՆԵԼ ՀԵՐԵԼՏ ԹՐԻԳԻՌԻՒՆ»

«ԱՁԴԱԿ»ի ՀԵՌԱԶՄԱՅԻ ԹԻՒՆԵՐԸ
«ԱՁԴԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՄԻՏԱԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ԱՆՍԱՆՉ ...

Շարունակում 7րդ էջին

աշխարհի բնակչության վիճակին մասին իր տարեկան տեղեկագրերին մէջ յայտնած է, թէ երիտասարդներ հետզհետէ աւելի պատասխանատու կը դառնան աշխարհի տարածքին էջը: Այլ վիճակ վարակումներն ու ՄԻՏԱԻ տարածելու մէջ՝ աղբատուութեան եւ տեղեկատուական ու կանխարգիլման սպասարկութիւններու մեծ պակասին պատճառով:

Իւրաքանչիւր 14 երկվայրկեանը 15 - 24 տարեկան անձ մը ժաշրոպ կը վարակուի: Անոնք ներկայիս հիւանդութեան նոր պարագաներու 50 առ հարիւրը կը ներկայացնեն, կ'ըսէ տեղեկագիրը:

Գործակալութեան գործադիր տնօրէնը՝ Սորայա Օպէյտ տեղեկագրերին հրատարակման առիթով Լոնտոնի մէջ կայացուցած մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնած է. «Ընդհանրական աղէտ մը պիտի դիմագրարաւենք, եթէ անտեսենք երիտասարդները եւ անոնց կարիքները»:

Տեղեկագիրը կը գոչուցնէ, որ ներկայիս պատմութեան մէջ մեծագոյն թիւով պատանիներու սերունդ մը կայ, աշխարհի 6,3 միլիարդ բնակիչներուն 1,2 միլիարդը 10 - 19 տարեկան է, եւ թէ անոնցմէ շատեր մահացու հիւանդութիւններ, անփափաքելի յղուածիւն եւ աղբատուութիւն կը դիմագրաւեն:

Տեղեկագրերին գնահատումով, էջը Այլ վիճակ կամ ՄԻՏԱԻ վարակումի մէջ պարագայի կանխարգիլում աղբատու երկրի մը համար 34,600 տոլար տնտեսական շահ կը համապատասխանէ, իսկ ընկերային շահերը շատ աւելի մեծ են:

Անիկա կը յայտնէ, որ աղբատուութիւնը ազդակ մըն է էջը: Այլ վիճակ տարածումին մէջ, որովհետեւ կարգ մը աղբատու աղջիկներ սեռային յարաբերութիւններ կը փոխանակեն դրամի հետ՝ դպրոցական թոշակները վճարելու կամ իրենց ընտանիքներուն օգնելու համար, ինչ որ գիրեք վարակումի վտանգին ենթակայ կը դարձնեն:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵՐԿՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԵՆՏՐՈՆ:

ՄԱՀԱԶԴԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյնը միւսն ու ռիզիկոյն, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարատրութիւն կայ:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5603 Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

1. Յկեանս արտոր - Իրանահայ օրաթերթ:	1. Մոխիր - Դիտող:
2. Կարաւազի թուրուհի - Չայնանիշ:	2. Ծնկոսկր - Ծանրութեան միակոր:
3. Անփայլ - Թեթեւ բուն:	3. Քներգ - Հոյ՛լ - Ժխտական մասնիկ:
4. Վերջերս - Չօրաբարբէլի որդին:	4. Թատրոնի վերաբերել:
5. Գոմէշի ձագ:	5. Ժամանակի միակոր - Սնգոյր:
6. Արական անուն - Հին վէրք:	6. Հայ նախարարական տոհմերէն:
7. Հաշուեցուցակ - Աղամանդ - Ուրոյն:	7. Կրկնուած բաղաձայններ - Կարճահասակ:
8. Թուրքներու ցեղ մը:	8. Հողային կալուած - Փեսային եղբայրը՝ հարսի նկատմամբ:
9. Չայնանիշ - Մտադրութիւն կամ թիրախ:	9. Մանրավաճառ:
10. Յուցական անուն - Կլայնկ - Թէրոզիկի ստորագրութիւններէն:	10. Լծորդութիւն - Տան կարասիներէն - Այրուրենէն:
11. Վահան - Կաշառք:	11. Չափ - Արական անուն:

ԹԻՒ 5602 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Մ	Ի	Ք	Ա	Մ	Ի	Մ	Ս	Ա	Ս
2	Ո	Ր	Ո	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ի	Ի	Ղ	Ա	Ղ	Ա	Ղ	Ա	Ղ	Ա
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Հ	Կ	Ո	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Գ
7	Գ	Ա	Կ	Ո	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ո
8	Ա	Ր	Ո	Ի	Ս	Ա	Ղ	Ա	Ղ	Ս
9	Ս	Ի	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ի	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ս	Ր	Տ	Ձ	Ի	Լ	Ս	Ի	Ս	Կ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լիբանանում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը

Լիբանանում Հայաստանի Շրջանաւարտների Միութիւնը

Սիրով հրաւիրում են ներկայ գտնուելու համերգի՝ նուիրուած 1988թ. Դեկտեմբերի 7ին Հայաստանում տեղի ունեցած աւերիչ երկրաշարժի 15ամեակին՝ կատարմամբ հայրենի տաղանդաւոր երիտասարդ երաժիշտներ **ԱՐՈՒՄ ԱՃԵՍԵԱՆԻ** (ղաշնամուր) եւ **ՍԵՐՂԵՅ ՍՄԲԱՏԵԱՆԻ** (ջութակ), որը տեղի կ'ունենայ Հիմնադրամի, 4 Դեկտեմբերի, 2003թ., ժամը 20:00ին - Assembly Hall- AUB, Տոմարը վաճառում են՝

- Virgin Megastore - Downtown
- «Երեւան» խանութ - Պուրճ Համուտ
- «Համագրային» գրախանութ - Պուրճ Համուտ
- «Տօնիկեան» գրախանութ - Մար Մըխայէլ

Համերգից զոյգացած ամբողջ հասոյթը տրամադրուելու է Գիւմրիում մշակութային ծրագրերի իրագործման համար:

Ծրագրում կը հնչեն Բարաջանեանի, Ծոպեանի, Ռախմանիովի, Ռաւելի եւ այլ նշանաւոր կոմպոզիտորների ստեղծագործութիւններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԱՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԼԵԲԱՆԱՆ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առնչական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթացիկ գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենեակը:

bezdig_mezdig@hotmail.com

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ)
Պէտք է դուք ձեզ ցոյց տաք աւելի նարտար ու գործունեայ դիմացը այն անձին, գոր կը կարծէք թէ ձեզ լաւ չի ճանչնար: Ուրեմն պիտի արժանանաք անոր գնահատանքին:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Չափազանց վստահութիւնը՝ անձի մը կամ հարցի մը լուծման պարագային ձեզ պիտի գարմացնէ, որովհետեւ յուսախաբ պիտի մնաք, ձեր հետապնդած ծրագիրը պիտի ձախողի:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Պիտի ցաւիք ձեր մէկ բարեկամին ձախողութեան, գոր կը նկատուիք զօրաւոր անձ մը: Եթէ միտիքարական խօսքեր չգտնէք գայն ամոքելու, գոնէ լուռ մտիկ ըրէք զինք:

ԽՆՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Ամբողջ օրը պիտի հանդիպիք ձախողութեան, բայց մի յուսահատիք: Պէտք է արագ որոշում տաք, սակայն ձեր նախագացումը կրնայ սխալ դուրս գալ:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Օրը նպաստաւոր չէ արդարութիւն փնտրելու համար: Պիտի չկարենաք նոյնիսկ լուծում մը գտնել փոքր հարցի մը: Մի շղայնանաք եւ համբերեցէք:

ԿՈՅՄ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Սերտ յարաբերութիւն պիտի ունենաք ձեր հարազատներուն կամ ձեր եղբոր հետ: Իրարու հետ պիտի պատրաստեք ձեր գործին վերաբերող ծրագիրներ եւ պիտի յաջողիք:

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Չոյզերու միջեւ խզում մը կրնայ ստեղծուիլ, որովհետեւ անոնց ունեցած կապը խախտու էր: Վերջ տուէք ըսի ըսուներու, եթէ կ'ուզէք երջանիկ ըլլալ:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Գլխացաւ մը պիտի տառապիք այսօր: Հարկ է երթաք մասնագետ բժշկի մը:

ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Եթէ մարգանթի մը կը հետեւիք, ձեր կարողութեան աւելի մարգափորձեր մի կատարէք: Մի կարծէք որ մէկ անգամէն անցեալին կորսնցուցած ուժը չէք կրնար վերագտնել:

ԱՅՏԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Պիտի ունենաք բազմաթիւ խնդիրներ համաձայնութեան եզր մը գտնելու ձեր ընտանիքին անդամներուն հետ: Անոնք ձեզ կը նկատեն անպատասխանատու, հետեւաբար եղբ համբերատար եւ իմաստուն:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Ձեր կարծիքը պիտի չառնեն հարցի մը շուրջ որ առաջին հերթին ձեզ կը վերաբերի: Այս կեցուածքը ձեզ պիտի սրտնեղէ: Եղբ խոհեմ եւ տրամաբանող:

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Կը սիրէք ուրիշները եւ կը ձախտէք անհաշիւ: Այս մասին դիտողութիւն պիտի լսէք ձեր դրամատուէն: Ուրեմն ձախտեցէք խնայողութեամբ:

ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՄԱՆՄԲՈՒՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ԵՐԳ

ՖՈՒՎԻՈ ՔՈՏԱԻ ԻՆՔՆԱՏԻՊ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՆՈՐ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Ֆուլվիո Քոտսիի գործերէն

Լիբանանցի երիտասարդ գեղանկարիչ Ֆուլվիո Քոտսի ներկայիս կը ցուցադրէ իր գեղանկարներու նոր հաւաքածոն, որ կը կրէ «Հիսթորիա սոթրափի տեպի» խորագիրը, որ ինքնին գաղափար մը կու տայ արուեստագետին ինքնուրոյն ճանձնարումը մէջ տիրող մթնոլորտին մասին: Անիմաստութեան ակնարկող այս խորագիրը կը տեղուած է դիտումնաւոր կերպով, արուեստագետին իսկ բացատրութեամբ արտայայտելու համար իրականութեան հետ ոչ մէկ կապ ունեցող եւ միջոցի մը մէջ ծփալու տպաւորութիւնը ձգող գեղանկարներուն բնութիւնը:

Փարաունեան եւ մե ս ո ա մ ե ռ ի կ ե ա ն նկարչութեան ազդեցութիւնները իր գեղանկարներուն մէջ փոխանցած Ֆուլվիո Քոտսի կը ստեղծագործէ՝ ուժեղ պարկտայն իր երեւակայութեան: Անոր գեղանկարները ներշնչուած կը թուին ըլլալ արուեստագետին անուրջներէն:

Իր ստեղծագործական պատմութիւնը լայնօրէն օգտագործող Ֆուլվիո Քոտսի, որ կու գայ արուեստագետներու ընտանիքէ (անոր քոյրը՝ Ֆլավիա Քոտսի, նոյնպէս գեղանկարիչ է), ամբողջութեամբ ինքնուարուեստագետ է եւ նկարելու սկսած է մանուկ տարիքէն: Ան ներկայիս մաս կը կապէ պատկերասփիւռի «Մուսթափայլ» կայանին շարժուն գծանկարներու բաժանմունքին: Արուեստագետը հետեւողականօրէն իր գործերը կը ներկայացնէ «Արքութեան» արուեստի թանգարանին մակարդակաւոր նկարչական հաւաքական ցուցահանդէսին՝ «Աշնանային սալոն»ին, որուն ծիրին մէջ 1995ին աւ արժանացած է յատուկ յիշատակութեան: Ան իր գործերը նոյնպէս ցուցադրած է արաբական եւ եւրոպական երկիրներուն մէջ:

Ֆուլվիո Քոտսիի «Հիսթորիա սոթրափի տեպի» ցուցահանդէսը տեղի կ'ունենայ «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահին մէջ եւ կը շարունակուի մինչեւ 13 Դեկտեմբեր:

ԱՅՍՈՐ

- Նուագահանդէս՝ սենեկային երաժշտութիւն, ժամը 20:00ին, ՍԷՆ Ժոզէֆ համալսարանի «Փ. Ապու Խաթեր» սրահ:
- Երաժշտական երեկոյ՝ «Օփերա սը սուար», ժամը 20:00ին, Գերմանական Մշակութային կեդրոն:
- Եւրոպական Շարժապատկերի փառատօն՝ շարժապատկերի «Սոֆի» սրահ, մինչեւ 7 Դեկտեմբեր:
- Տօնավաճառ՝ «Սուր էլ Պարզութեան», «Պիէլ», մինչեւ 7 Դեկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Տը լա փեթիւր... Սեմփլըման», Սամիր Թապիի գործերը, «Ալիս Մոդապոլա» ցուցասրահ, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Լա Ռըշերտը տը Լ'օմ օ սապլ», Անժելիքա Շրեօտըրի գործերը, «Կեօթե» հիմնարկ, մինչեւ 19 Դեկտեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Հիսթորիա սոթրափի տեպի», Ֆուլվիո Քոտսիի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 13 Դեկտեմբեր:
- Թատրոն՝ «Քամա ալա արտ, բազալիքա մին... ֆաուր», ժամը 20:30ին, «Քազիօ» տիւ Լիպան, մինչեւ 29 Փետրուար:

ԱԶԳԱԿ 50 ՏՄՐԻ ԽՈՒՄ

2 Դեկտեմբեր 1953

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՅՈՒՅԱԳՐԵՆ ԵՏԸ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱՉԵՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԱԶԱՏ ԱԶԳԵՐՈՒՆ, Կ'ԸՍԷ ՈՒԱՇԻՆԿԻԸ

Պետական Քարտուղարութեան բանբեր մը յայտնեց, որ Բրիտանիոյ, Միացեալ Նահանգներու եւ Յարմասի Ներկայացուցիչները Պերմուտայի ժողովին: Առաջին առիթով պիտի անդրադառնան չորս արտաքին նախարարներու ժողովի մասին Խորհրդային Միութեան ներկայացուցած վերջին յուշագրին:

Բանբերը ըսաւ. - Սովետական յուշագիրը ստացուեցաւ վերջին օրերուն: Յուշագիրը կը պատասխանէ երեք երկիրներու 16 նոյեմբերին դրկած նամակին, որ զուցակիցներու պատասխանէ էր Լուկանօ գուժարուելիք ժողովի մասին:



«Խորհրդային Միութեան յուշագիրը չափուած է կշռուած է եւ կը դրկուի այնպիսի ատեն մը, երբ Յարմասի երեսփոխանական ժողովին մէջ վիճաբանութիւններ տեղի կ'ունենան եւրոպական պաշտպանութեան ծրագրին շուրջ: Որով յայտնի է թէ Մոսկուա այս կերպով կ'ուզէ կացիոնաբար ծրագիրը եւ արգելներ յարուցանել յիշեալ ծրագրի վաւերացման համար:

«Երկրորդ հարցը կը կայանայ քիչ մը բարեւաւելու մէջ նոյեմբեր 3ի սովետական բիրտ պատասխանին ոճը, որ մեծ յուսալում առաջ բերաւ աշխարհի մէջ եւ տուաւ այն գաղափարը, թէ Մոսկուա չի փափաքիր բանակցութեանց մէջ մտնելու, որով յայտնի է, որ այս յուշագիրը, ինչպէս նաեւ Մոլոտովի մամուլի ասուլիսը, նպատակ ունի քիչ մը մեղմացնել սովետական դիրքին ստեղծած անհանդիպութիւնը: Պատկերակցում մըն է այս եւ կ'ապացուցանէ, որ բարոյական եւ դիւանագիտական նախաձեռնութիւնը կը պատկանի ազատ ազգերուն»:

ԱՅՍՈՐ 2 ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

■1920.- Հայաստանի խորհրդայնացում:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ ԱՅՍՕՐ՝ ԹԱՏԱՍՈՆ ՍՈՒՐ - Շ.Ս.Ը.Ս.

Ամսուան մը դադարէ ետք (Ռամատանի տօնին առիթով), այսօր՝ Երեքշաբթի կը վերսկսին Լիբանանի ֆուտպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումները, երբ տեղի կ'ունենան 4րդ հանգրուանի մրցումները: Նշենք, թէ այսօրուան յայտագիրին վրայ են երեք ճակատումներ, իսկ վաղուան յայտագիրին վրայ են՝ երեք ճակատումներ:

4րդ հանգրուանի բացման մրցումը տեղի պիտի ունենայ այսօր կէսօրէ ետք ժամը 2:15ին, երբ Թատամոն Սուր հարաւի մէջ պիտի հիւրընկալէ Շ.Ս.Ը.Ս.ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբը:

Նշենք, թէ այս ուղղութեամբ Շ.Ս.Ը.Ս.ի ֆուտպոլի յանձնախումբը յատուկ կարգադրութիւններ կատարած է եւ խումբին համակիրներուն համար տրամադրած օթոպիւսներ, որոնք կէսօրուան ճիշդ ժամը 12:00ին Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին առջեւն են ձաւթայ պիտի էլլեն, դէպի՝ Սուրի քաղաքապետարանի դաշտ:

Շ.Ս.Ը.Ս.ի ֆուտպոլի խումբը այժմ կը գտնուի ոչ նախաձեռնող դիրքի վրայ, գրաւելով 11րդ եւ նախաձեռնող դիրքը: Առաջին երկու հանգրուաններուն, պարտութիւններ կրելէ ետք, Շ.Ս.Ը.Ս. երրորդ մրցումին եղանակի իր առաջին կէտը ապահովեց Սաֆայէն:

Նշենք, որ Ստորեւ՝ 4րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ԱՅՍՕՐ	Ժամանակ	Ժամ	ԳԼՇՏ
Թատամոն Սուր - Շ.Ս.Ը.Ս.	2:15	Սուր	
Շապապ Սահէլ - Ահտ	6:00	Մ. Աւան	
Անսար - Շ.Ս.Մ.	8:30	Պէյրուք	

ՎԱՂԸ	Միջոց	Ժամ	ԳԼՇՏ
Օլիմպիկ - Մապարա	2:15	Պ. Համուտ	
Օլիմպիկ - Մապարա	6:00	Պէյրուք	
Նրժմէ - Սաժէս	8:30	Մ. Աւան	

Շ.Ս.Ը.Ս.էն բացի, ցարդ յաղթանակ չեն կրցած արձանագրել նաեւ՝ Մապարա, Սաֆա եւ Սալամ:

Ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը գրաւող Օլիմպիկը, միակ խումբն էլ լայնով իր կատարած երեք մրցումներուն ալ յաղթանակ արձանագրած է:

Յ. Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ		
1.- Օլիմպիկ	3	0	5	1	9	
2.- Նրժմէ	2	1	0	9	5	7
3.- Ահտ	2	1	0	5	2	7
4.- Սաժէս	2	1	0	4	2	7
5.- Անսար	1	1	1	6	6	4
6.- Սահէլ	1	1	1	4	4	4
7.- Թատամոն	1	0	2	2	2	3
8.- Շ.Ս.Մ.	1	0	2	2	3	3
9.- Մապարա	0	2	1	5	7	2
10.- Սաֆա	0	2	1	3	6	2
11.- Շ.Ս.Ը.Ս.	0	1	2	3	6	1
12.- Սալամ	0	0	2	3	6	0

«ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ»

ԱՅՍՕՐ՝ ԿԱԼԱԹԱՍԱՐԱՅ - ԵՈՒՎԵՆԹՈՒՍ

«Չէմփիլընս Լիկ»ի ֆուտպոլի մրցաշարքին, այսօր՝ Երեքշաբթի տեղի կ'ունենայ Կալաթասարայ - Եուվենթուս մրցումը, որ յետաձգուեցաւ անցեալ Նոյեմբեր 25էն, Թուրքիոյ մէջ տիրող անապահով կացութեան պատճառով:

Իր գումարած վերջին ժողովին, Եու. Է. Էֆ. Ա. ն յայտնեց, որ անհկա տեղի պիտի ունենայ չէզոք դաշտի վրայ՝ Տորթուսուտի «Ռեյսֆալըն»ի մէջ: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 21:45ին՝ Պէյրուքի ժամով:

Իտալական կազմին համար այս մրցումին արդիւնքը կարեւոր չի նկատուիր, որովհետեւ անհկա արդէն իսկ ապահոված է Բ. հանգրուանին իր տոմարը: Սակայն Եուվենթուսը արձանագրելիք յաղթանակը, կամ նոյնիսկ՝ հաւասարութիւնը կը նշանակէ, որ թրքական կազմը

Տեղի ունենալիք այս մրցումին նախօրեակին, այժմ Գ. խմբակին դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

Վերջնական ապէս դուրս պիտի մնայ մրցաշարքէն:

Յ. Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ		
1.- Եուվենթուս	3	1	0	8	4	10
2.- Ռէյս Սուսեթուտ	2	2	1	7	7	8
3.- Օլիմպիկ	1	1	3	6	6	4
4.- Կալաթասարայ	1	0	3	3	7	3

ԳԵՐՄԱՆՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱՎ ՄՐՑԱՇԱՐՔ

ՎԱՂԸ՝ ՊԱՅԷՐՆ ՄԻՆԻՆԻՆ - ՀԱՄՊՈՒՐԿ

Գերմանիոյ ֆուտպոլի բաժակի մրցաշարքին 1 - 16րդ հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենան չորս ճակատումներ, իսկ վաղը՝ դարձեալ չորս հանդիպումներ:

Տեղի ունենալիք ութ մրցումներէն երեքը պիտի ըլլան Ա. դասակարգի խումբերուն միջեւ ճակատումներ, մինչ մնացեալ հինգ մրցումներուն ընթացքին Ա. դասակարգին մաս կազմող խումբեր իրենց դիմաց պիտի ունենան համեմատաբար աւելի տկար մրցակիցներ:

Կարեւորագոյն եւ տաք ճակատումներէն մէկը պիտի ըլլայ վաղը, Ռիմպիականի դաշտին վրայ տեղի ունենալիք մրցումը, որուն ընթացքին Պայէրն Միննին պիտի հիւրընկալէ Համպուրկը:

Յ. Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Վալենսիա	27	(27-11)		
2.- Ռէյս Մատրիտ	27	(27-15)		
3.- Տեփորթիօ Քորուս	26	(21-10)		
4.- Աթլետիկ Բիլթա	22	(17-16)		
5.- Պարսելլոնա	20	(17-13)		

Ստորեւ՝ 1 - 16րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ԱՅՍՕՐ	Ժամ	ԳԼՇՏ
Պորուսիա Մէոնընկիտապա - Շրուքհարթ	Հոֆֆենհայմ - Պայէր Միննին	
Այնթրախթ Պրատուշուէկ - Ալեմանիա Աախըն	Եան Ռեյկենսպուրկ - Տուրկուրկ	

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ 14ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԸ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 14րդ հանգրուանի բացման մրցումին, այսօր՝ Երեքշաբթի, Ռէյս Սուսեթուտ իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Վալենսիան, որ անցեալ շաբաթավերջին 3-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ռէյս Սարակոսան, Ռէյս Մատրիտէն խլեց պարագլուխի դիրքը: Վաղը տեղի կ'ունենան եօթ ճակատումներ, իսկ Հինգշաբթի՝ երկու մրցումներ:



Ռոնալտինիո

Ռէյս Մատրիտ, որ իր ունեցած տկար կողմերէն շնորհիւ այժմ կը գրաւէ երկրորդ դիրքը, մատրիտեան տերպիին վաղը իր դաշտին՝ «Սանթիակո Պետրուսի»ի մէջ պիտի հիւրընկալէ Աթլետիկ Մատրիտը:

Ռէյսի համար այս մրցումը պիտի ըլլայ կարեւոր, որովհետեւ անհկա շաբաթավերջին բաւական կարեւոր եւ քիչ մըն ալ դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Պարսելլոնայի «Նուրսմի»ի դաշտը: Անհկա սակայն կրնայ օգտուիլ Ռոնալտինիոյ բացակայութենէն, որովհետեւ Պարսելլոնայի բոլորները կը յայտնեն, որ վիրատու պրակտիկին իր մասնակցութիւնը պիտի չբերէ այս կարեւոր ճակատումին:

Պարսելլոնա, որ այժմ եօթ կէտով ետ կը մնայ Վալենսիայէն եւ Ռէյս Մատրիտէն, 14րդ հանգրուանի իր մրցումը պիտի կատարէ, այցելելով Մալակայի դաշտը:

Ստորեւ՝ 14րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:	ԱՅՍՕՐ	Ժամ	ԳԼՇՏ
	Ռէյս Սուսեթուտ - Վալենսիա		
	Ռէյս Մատրիտ - Աթլետիկ Մատրիտ		
	Ռէյս Վալաստիլիտ - Տեփորթիօ Քորուս		
	Մալակա - Պարսելլոնա		
	Էսպանիոլ - Օսասունա		
	Սելթա Վիկո - Ալպասետէ		
	Ռէյս Պէթիս - Մուրսիա		
	Վիարէյալ - Մալորքա		
	ՀԻՆԳՇԱՐԹԻ		
	Ռասիսկ Սանթանտեր - Սելիլլա		
	Ռէյս Սարակոսա - Աթլետիկ Պիլասո		

ԿԱՍԱԶՊԱՅԻՆ «Ն. ԱՂԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒ ԳԱՍԸՆԹԱՅՔ


Ակտեալ Ուրբաթ, 5 Դեկտեմբերէն, երկուշաբթի ժամը 8:30ին, «Աղբալեան- Շ. Ս. Ը. Ս.» Մարզաձալկութեան համալիրին մէջ:

ԾԱՆՕԹ.- Արձանագրութեան համար կարելի է դիմել հեռ. 03- 205325 եւ 03- 783882:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԵՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԶ ԵՒ ՔԻՆԿԶ՝ ՅԱՂԹԱԿԱՆ



Շաքիլ Օնիլ (ձախից)

Եւ. Պի. Էյ.ի երէկուան մրցումներուն, Լոս Անձելըս Լէյքըրս իր դաշտին վրայ 99-77 արդիւնքով պարտութեան մատնեց Ինտիանա Փէյսըրըք, այսպիսով արձանագրելով եղանակի իր 14րդ յաղթանակը: Այդ մէկէն բացի, Լէյքըրս յաջողեցաւ իր դաշտին վրայ արձանագրել իր 25րդ յաջորդական յաղթանակը: Նշենք, թէ

Լէյքըրս թէեւ ցարդ կրած է երեք պարտութիւն, սակայն երկուսն իր մրցակիցին նման արձանագրած է նոյն արդիւնքը (14-3):

Լէյքըրսի մարզիկ Շաքիլ Օնիլ նշանակեց 23 կէտ, իսկ անոր խմբակից Քոպէ Պրայնըք՝ 12 կէտ եւ 7 խօսք:

Սաքրամենթոյի մէջ, Քինկ 105-92 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Նիւ ձըրքի Նէթըր: Այսպիսով, Քինկ, որ իր դաշտին վրայ արձանագրեց իր 10րդ յաղթանակը, ինչպէս նաեւ յաջորդական իր 8րդ յաղթանակը:

Յաղթական կազմին մարզիկներէն Փեժա Սթոյաքովիչ (Սերպիա) նշանակեց 25 կէտ:

ՄԱՆՁԵՍԹԸՐ ԵՈՒՆԱՅԹԸՏ - «ՎՈՏԱՖՈՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՍ



Մանչեսթըր Եունայթըտի պատասխանատուները երկէկ յայտնեցին, թէ չորս տարիով երկարաձեցին իրենց պայմանագրութիւնը՝ բրիտանական «Վոտաֆոն» բջիջային ընկերութեան հետ, փոխան՝ 62 միլիոն ամերիկեան տոլարի:

Անգլիական սկումբը, որ Յունիս 2000ին պայմանագրութիւն մը ստորագրեց անոր հետ, նախքան այդ երկարաձգումը, մինչեւ յառաջիկայ Մայիս 2004 պայմանագրութիւն մը ստորագրած էր անոր հետ:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

ՄՏՔՈՎ ԹԵՐԱԸ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ «ՁՈՒԱՐԹՆՈՅ» ԿԵԳՐՈՆ

ՌԻՏԵՍԵՂԵՆԻ ԵՒ ԶԵՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՏՕՆԱՎԱՃԱՌ

Տեղի կ'ունենայ 4 եւ 5 Դեկտեմբեր, 2003, կէսօրէ առաջ ժամը 10:00էն սկսեալ մինչեւ ժամը 4:00, կէսօրէ ետք՝ «Չուրթըն» կեդրոնին մէջ:

Հասցէ.- Շալ Ալեւորաքանակ հոգեւոր եկեղեցոյ շրջափակ:

ՀՐԱԻՐ

ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԵՋ ԻՍՐԱՅԵԼԱՑԻՔ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ԴԵՍ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երեք պաղեստինցիներ, որոնց կարգին է հնր տարեկան մանչուկ մը, սպանուեցան երէկ Այսրյորդանանի մէջ իսրայէլեան բանակին կողմէ, որ ներխուժած էր Ռամալլա ծայրայեղականներ ձերբակալելու համար:

Ինը տարեկան Մազէն Համատան վիրաւորւած էր Ռամալլայի մօտ Ամարի գաղթականացիներին մէջ տեղի ունեցած բախումին ընթացքին: Ան անմիջապէս հիւանդանոց փոխադրուած է, ուր սակայն մահացած է: Երեք պաղեստինցիներին վիրաւորուած են նաեւ եօթը պաղեստինցիներ:

Իսրայէլեան պինտորակաւ աղբիւրներ հաղորդած էին, որ բանակը սպանած է երկու պաղեստինցիներ, որոնք պինտորներուն վրայ կրակ բացած էին Ռամալլայի մէջ:

Պաղեստինեան աղբիւրներ հաղորդեցին, որ իսրայէլեան ուժեր Ռամալլա ներխուժած էին մեծ թիւով հրասայլերով եւ վրահասպտ փոխադրակառքերով: Յիշեալ աղբիւրները աւելցուցին, որ Ռամալլայի վանապահ թաղամասերուն մէջ բախումներ արձանագրուած են իսրայէլեան ուժերուն եւ պաղեստինցիներուն միջեւ:

Իսրայէլեան բանակը հաստատեց, որ Ռամալլա մտած է՝ հետապնդելու համար ծայրայեղականներ, որոնք թիրախ կը դարձնեն իսրայէլացիները: Իսրայէլացի բանբեր մը յայտնեց, որ երէկուան գործողութեան ձերբակալուած են 30 ծայրայեղականներ: Բանակին ռատիոկայանը հաղորդեց, որ գործողութեան ընթացքին գտնուած է նաեւ զինքի բարտաստութեան գործարան մը: Բանակին մէկ բանբերը աւելցուց, որ Ռամալլայի յարձակումին նպատակը պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի կեղծանունով շրջապատելն էր:

Միւս կողմէ, իսրայէլեան պետութիւնը սկսած է բնակեցման վայր մը կառուցել Արեւելեան Երուսաղէմի ժայռայ Մուքապէթ թաղամասին մէջ: Իսրայէլի ռատիոկայանը հաղորդեց, որ 500 բնակարաններ պիտի կառուցուին: Բնակեցման վայրը պիտի կոչուի «Նոֆ Զաա»:

Քաղաքական գետնի վրայ, պաղեստինցի զլխաւոր բանագնաց Մաշկ Սուրաբը ըսաւ, որ վարչապետ Ահմէտ Քորէյի եւ Արիէլ Շարոնի հանդիպումի նախապայման չէ ապահովութեան պատի կառուցման կասեցումը, որովհետեւ անիկա արդէն իսկ պարտաւորութիւն է, զոր պէտք է յարգէ Իսրայէլ:

● ՊԱՆԿԱՅԻՆՆԵՐ ԱՐՄԱՏԱԿԱՆ Զարծումներու հետ պինդադու մը ապահովելու բանակցութիւնները, որոնք այսօր պիտի սկսէին Գահիրէի մէջ, յետաձգուեցաւ քանի մը օրով: Բանակցութիւններուն, որոնք կը վայելէն Եգիպտոսի հովանաւորութիւնը, պիտի մասնակցին Համա, Իսլամական ժիհաւ, Տաթի եւ այլ շարժումներ:

ՍՈՒՐԻԱ ՕԺԱՆԴԱԿԱՍ Է ՄԻԱՑԵԱԼ ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ՝ ԱՐԱԲԵԿՉԱԿԱՆ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐ ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼՈՒ ԸԱՍԱՐ

Կ'ԸՍԵ ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏ

ՆԻԻ ԵՈՐՔ, 1 (ԱՅՓ).- Սուրիա օժանդակած է Մ. Նահանգներու՝ ամերիկեան թիրախներու վրայ ահաբեկչական առնուազն 7 յարձակումներ կանխարգիլելու համար, ըսած է նախագահ Պաշար Ասատ՝ «Նիւ Եորք Թայմզ» թերթին:

Նախագահը յայտնած է, թէ սուրիական գաղտնի սպասարկութիւնները «տրամադրած են տեղեկութիւններ», որոնք մօտալուտ յարձակումներ կանխարգիլած են: Ան նաեւ հերքած է, որ Սուրիա ահաբեկչութիւն կը հովանաւորէ կամ թէ իր երկիրը Մ. Նահանգները թշնամի կը նկատէ:

Ընդհանուր առմամբ հաշտարար ոճ որդեգրելով, Ասատ յայտնած է, թէ արաբական աշխարհին մէջ Մ. Նահանգներու հանդէպ գոյութիւն ունեցող ծիտական կեցուածքը կարելի է յաղթահարել:

Սուրիացի ղեկավարը ըսած է, որ իր գաղտնի սպասարկութիւնները սերտօրէն կը գործակցին «Մի. Այ. Էյ.»ի հետ՝ արմատական խմբակներու դէմ պայքարին մէջ եւ Դամասկոս այլեւ չ'արտօներ պինտայներու, որ սահմանային իր պաշտօնական անցքերը օգտագործեն Իրաք թափանցելու եւ ամերիկեան զլխաւորութեան նիւթերուն դէմ պայքարելու համար:

Ան յայտնած է, որ Սուրիա չի կրնար հակակշռել Իրաքի հետ 480 քմ. երկարութեամբ ամբողջ սահմանագիծը, սակայն նաեւ նսեմացուցած է իրաքեան դիմադրութեան մէջ օտար պինտայներու կարեւորութիւնը:

Թերեւս 1000 կամ 2000 օտարներ կան, ըսած է նա, աւելցնելով սակայն, թէ պէտք չէ 25 միլիոն իրաքցիները մոռնալ: Ասատ շեշտած է, որ Սուրիա ահաբեկչական կազմակերպութիւններ չի հովանաւորէ եւ թէ Հըլլայի հանդէպ անոր պօրակցութիւնը քաղաքական է ու դրամ կամ զինք չ'ընդգրկէ:

Թէեւ ան ուժգին ընդդիմացած է ամերիկեան ուժերուն կողմէ Իրաք ներխուժումին, Ասատ ըսած է, թէ իրաքցիք պէտք է որոշեն, թէ Մ. Նահանգները պէտք է քաշեն իրենց ուժերը: Այլ գիծի վրայ, նախագահը հերքած է, թէ Դամասկոս օժանդակած է Սատամ Հիւսէյնի՝ արգիլուած զինքներու ձեռքբերման համար, մինչ կարգ մը տեղեկութիւններու համաձայն՝ Սուրիա օգնած է Իրաքի Հիւսիսային Քորէային հրթիռներու արտադրութեան արհեստագիտութեան գնման համար:

Միւս կողմէ, Ասատ յայտնած է, թէ Մ. Նահանգներ պէտք է օժանդակեն Սուրիոյ եւ Իսրայէլի միջեւ բանակցութեանց վերակենդանացման: Ան ըսած է, որ նման բանակցութեանց կայացման համար որեւէ նախապայման չի դնէր, դիտել տալով, որ եթէ անոնք յաջողին, իսրայէլի հետ լիիրաւ, բնական յարաբերութիւններ կրնան հաստատուիլ:

Ասատ ըսած է, որ Կոլոնի բարձունքները Սուրիոյ վերադարձնելու առնչուող համաձայնութեան մը մանրամասնութիւնները՝ Իսրայէլի տարեկան պայտնութեան երաշխիքներուն փոխարէն, 80 առ հարիւրով ամբողջացած են իր նախագահ ղառնային քանի մը ամիս առաջ, հետեւաբար ժամանակի կորուստ պիտի ըլլայ բանակցութիւնները կերոյնէ սկսիլ:

Սուրիոյ ղեկավարը նաեւ քննադատած է Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Պուշը, որ անհրաժեշտ ուշադրութիւնը չի դարձնէր Սուրիա - Իսրայէլ հողային բանավեճին, զայն «լայն փոս մը» նկատելով Ուաշինգթոնի միջին արեւելեան ռազմավարութեան մէջ:



Սուրիացի ղեկավարը ըսած է, որ իր գաղտնի սպասարկութիւնները սերտօրէն կը գործակցին «Մի. Այ. Էյ.»ի հետ՝ արմատական խմբակներու դէմ պայքարին մէջ եւ Դամասկոս այլեւ չ'արտօներ պինտայներու, որ սահմանային իր պաշտօնական անցքերը օգտագործեն Իրաք թափանցելու եւ ամերիկեան զլխաւորութեան նիւթերուն դէմ պայքարելու համար:

ՍՈՒՐԻԱ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՅԱՆՁՆԵՑ 22 ԿԱՍԿԱԾԵԼԻՆԵՐ

Սուրիա անակնկալ ծեսք մը կատարած է՝ Թուրքիոյ յանձնելով թուրք 22 կասկածելիներ, որոնք կը հետապնդուէին Պոլսոյ անձնասպանական գործողութիւններուն առնչութեամբ:

Անոնց յանձնումով, Թուրքիոյ մէջ Նոյեմբեր 15ի եւ 20ի չորս յարձակումներուն առնչութեամբ ձերբակալեալներուն թիւը մտաւորապէս 60ի հասած է: Երկու սինակոկներու, բրիտանական դրամատան մը եւ բրիտանական հիւպատոսարանին դէմ յարձակումները 61 զոհ խլած են:

Կ'ենթադրուի, որ 22էն երկուքը կապ ունի յարձակումները ծրագրող բանայի կասկածելի Ապաթ Եփնճիի հետ, մինչ ուրիշներ Սուրիոյ մէջ կրօնական ուսանողներ եղած են:

Սուրիական տեղեկատուութեան նախարարութեան մէկ պաշտօնատարը, որ մերժած է ինքնութիւնը հրապարակել, յայտնած է, թէ Սուրիա կասկածելիները յանձնած է համաձայն Սեպտեմբեր 2001ին Թուրքիոյ հետ կնքուած համաձայնագրի մը:

Անիկա կը պահանջէ, որ երկու երկիրներուն ապահովութեան եւ կայունութեան վտանգ սպառնացող ուժերներու մեղսակիցներ յանձնուին, ըսած է աղբիւրը:

«Սուրիա եւ Թուրքիա կ'ընդդիմանան ահաբեկչութեան: Սուրիոյ համար սկզբունքի հարց է օժանդակել միջազգային խմբակներու, որ արմատախիլ ընեն ահաբեկչութիւնը, ըսած է պաշտօնատարը:

Թուրքիա երէկ յայտնած է, թէ Պոլսոյ անձնասպանական գործողութիւններուն հեղինակները «Քայիտա»ի հետ կապեր ունեցած են:

ԱՍԵՐԻԿԵԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐ

Մինչ այդ, ամերիկեան տեղեկագիր մը երէկ Սուրիան ամբաստանած է, ըսելով, թէ անիկա ամերիկեան զլխաւորութեամբ պատերազմէն առաջ Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյնի օժանդակած է Հիւսիսային Քորէային կորիպային հրթիռի մը պատրաստութեան համար անհրաժեշտ արհեստագիտութիւնը ձեռք ձգելու համար:

Ըստ «Նիւ Եորք Թայմզ» թերթին, Փիոնկեանկ թէեւ ոչինչ տրամադրած է Իրաքի, սակայն Դամասկոս տարանցումի ճամբար մը եղած է նիւթերու փոխադրութեան համար:

Սուրիոյ մէջ տեղի ունեցած են նաեւ բանակցութեանց քանի մը ռաուտեր՝ յայտնապէս սուրիական կառավարութեան գիտակցութեամբ եւ Դամասկոս կը շարունակէ ապաստան տալ Իրաքի այն պաշտօնատարին, որ համաձայնութիւնը գոյացուցած է, հաղորդած է ամերիկեան թերթը:

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ թերթին ըսած է, թէ առաջին անգամ ըլլալով կը լսէ այդ պատմութիւնը:

ՍԱՄԱՐԱՅԻ ՄԵՋ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ

Կ'ԸՍԵ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՀՐԱՍՆԱՍԱՐԸ

Իրաքեան Սամար քաղաքին ամերիկացի պինտորակաւ հրամանատար երէկ յայտարարեց, որ Կիրակի գիշեր սկսած բախումները խլած են 54 զոհեր, որոնք ըստ ամերիկացիներուն խոտլարարներ են ըստ իրաքեան աղբիւրներու՝ մեծ մասամբ քաղաքայիններ:

Գնդապետ Տրիտրիք Ռուտըշայմ ըսաւ, որ կորել պիտի շարունակուի թշնամիի դէմ, մինչեւ որ անիկա տեղի տայ ու վար առնէ զինքէն: Ան աւելցուց, որ ցարդ Սամարայի մէջ այս տարողութեամբ բախումներ տեղի չեն ունեցած եւ թէ ամերիկեան ուժերը յարմար ձեւով պիտի հակադարձեն:

Կիրակի յետմիջօրէին սկսած արիւնալի բախումները, որոնք շարունակուեցան երէկ ալ, պատճառ դարձան որ Սամարայի տեղական իշխանութիւնները պահանջեն ամերիկեան ուժերուն հեռացումը:

Սամարայի բախումները ծայր տուած էին, երբ քաղաքէն անցնող ամերիկեան ուժեր Թակարդի մէջ առնուեցան: Չինտորները հակադարձեցին լայնածիր գործողութեամբ մը: Քաղաքին ոստիկանապետը ըսաւ, որ մինչեւ ամերիկացի պինտորներ պատրաստուին կրակ բանալու ընթացքին պինտայներուն վրայ, որոնք երկու հոգի վիրաւորած էին, պինտայները արդէն իսկ հեռացած էին միջադէպին վրայէն: Ոստիկանապետը աւելցուց, որ ամերիկեան ուժերը աչ ու ձախ կրակած են առանց ստուգելու թէ ո՞վ թիրախ կը դառնայ իրենց փամփուռներուն: Արդիւնքը եղած է աւելի քան յիսուն զոհ: Ոստիկանապետը յայտնեց նաեւ, որ աւելի քան քսան իրաքցիներ վիրաւորուեցան, երբ կ'աղօթէին մզկիթի մը մէջ: Այլ վիրաւորներ յայտնեցին, որ իրենց բնակարաններուն մէջ նստած էին, երբ փամփուռներով եւ ռումբերով բեկորներով վիրաւորուեցան:

● ԲՐԻՏԱՆԻՈՅ վարչապետ Թոնի Պլէրի բանբեր ըսաւ, որ Իրաքի մէջ զաշակից ճակատը տեղի պիտի չտայ ռումբերու դիմաց ու պիտի չնսահանջէ երկիրէն, մինչեւ որ ժողովրդավար ու ազատ իշխանութիւն մը չհաստատուի Իրաքի մէջ:

ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

● ՄԱՆԻԱ.- ՄԻՏԱԻ Համաշխարհային Օրւան առիթով, Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը երէկ յայտնած է, թէ Ասիա - Խաղաղական շրջանին մէջ իրականութիւնը ներկայիս վարկեանը մէկ զոհ կը խլէ:

● ՊԷՅՃԻԿ.- 6,1 աստիճան ռիսթրո ռիճանութեամբ շարժ մը երէկ հարուածած է Իրիսիսարեւմտեան Չինաստանը, առնուազն 8 զոհ խլելով:

● ՊԷՅՃԻԿ.- Արեւելեան Չինաստանի մէկ գիւղին մէջ 4 երեխաներ սպանուած են Շաբաթ օր, երբ պայթում մը տեղի ունեցած է շէնքի մը մէջ, ուր հրավառ նիւթեր վետեղուած էին:

● ՄՈՍԿՈՒ.- 2էէն խումբ մը գործարարներ 5 միլիոն տոլար առաջարկած են տեղեկութիւններու համար, որոնք կրնան օժանդակել չէչէն ըմբոստ ղեկավար Շամիլ Պասաեի «չէչոքսցման»:

(ԱՅՓ)

ԹՈՒՐԻՔԻՈՅ ՄԵՋ ՎԵՐՁԵՐՍ ԿԱՍԱՐՈՒԱԾ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ...

Շարունակուած Ա. ԷջԳ

Կան գործողութիւններ կատարած է հայերու դէմ: Կազմակերպութիւնը տեղեկուած է 18 տարի առաջ, Պիւկէօյէն սերած անձերու կողմէ:

Նշեալ կազմակերպութիւնը 1993էն ի վեր ձեռնարկած է ահաբեկչական բացառապէս ռազմավարութեան, թիրախ ունենալով բրիտանական եւ իրեաներ, երոպացիներ, քրիստոնեաներ, սահմանափակ իրաւունքներ, սահմանափակ իրաւունքներ, կ'ըստ վարկեր:

Կ'ենթադրուի, որ անոնք նաեւ կատարած են Պոլսոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Աստուածածին եկեղեցոյ ռմբակարումները: «Իսկ Արցախեան ճակատին վրայ խայտառակուելէ ետք, անոնք վերադարձած են Թուրքիա», կը նշէ ազերպէյճանական լրատուամիջոցը:

«Թերեւս եթէ զարաքաղցիներու նպատակը ըլլար հակառակորդին ոչնչացումը, եւ ոչ՝ հայկական հողերէ անոնց հեռացումը, այսօր չէր ըլլար հայ արարող անգլիացի, հայ, թուրք ընտանիքներու ողբը, որոնք տուժեցին Պոլսոյ ահաբեկչութեան հետեւանքով», կ'ըսէ ազրպէյճանական լրատուամիջոցը:

ՍԱՍԱԹՐԻԽԹԻ ՄԵՋ...

Շարունակուած Ա. ԷջԳ

Փան կազմակերպութեան վերաբերելով: Նախարար Օսկանեան վերահաստատած է երեւանի շահագրգռութիւնը՝ Վրաստանի մէջ կայունութեան շուտափոյթ վերակազմակերպման առնչութեամբ եւ շեշտած է Հայաստանի պատրաստակամութիւնը՝ Վրաստանի մէջ նոր իշխանութիւններու ձեւաւորումէն ետք երկկողմանի համագործակցութեան խորացման գծով:

Մասաթրիիթի մէջ նախարար Օսկանեան նաեւ տեսակցեցաւ ԵԱՀԿ Մինսքի խմբակի նախագահներուն հետ եւ քննարկեց անոնց շրջան կատարելիք այցելութեան առնչուող հարցեր:

Մինսքի խմբակի նախագահներու այցելութիւնը, որ հասանաբար կայանայ այս շաբաթվա ընթացքին, պիտի պարունակէ հանդիպումներ Հայաստանի եւ Ազրպէյճանի նախագահներ Ռուպիլ Քոչարեանի եւ Իլիամ Ալիեւի հետ: Պիտի քննուի երկու նախագահներուն միջեւ բանակցութիւններու վերսկսման հնարաւորութիւնը:

ՓՈՒԹԻՆ - ՔՈՉԱՐԵԱՆ ...

Շարունակուած Ա. ԷջԳ

Բանայով «առանց փողկապներու» հանդիպումը, Ռուսիոյ նախագահը առաջարկած է կարծիքներ փոխանակել Լեոնային Ղարաբաղի տագնապին եւ շրջանային հարցերու շուրջ: Փութին դիտել տուած է, թէ ինք վերջերս Կոմկաի հոգեւոր առաջնորդներուն հետ հանդիպում, իսկ Ազրպէյճանի նախագահին հետ հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է եւ քննարկած՝ Լեոնային Ղարաբաղի տագնապի լուծման հետանկարները: «Թէեւ տագնապը բարդ է, սակայն Ազրպէյճանի կառավարութիւնը դրականօրէն տրամադրուած է», նշած է Փութին:

Քննարկուած են նաեւ երկկողմանի յարաբերութիւններուն վերաբերող հարցեր, յատկապէս «Գոյք» պարտքի դիմաց» ծրագիրը:

Նախագահ Քոչարեան անդրադառնալով հայեւոսու յարաբերութիւններուն նկատել տուած է, թէ «ընդունուած որոշումներուն գործադրութիւնը տնտեսական յարաբերութիւններուն կարեւոր աճ կ'ապահովէ», աւելցնելով, որ գործակցութեան հետագայ վարձագման համար «մեծ ներուժ կայ»:

Կրեմլինի վարչակազմի ղեկավար Սերգէյ Պրիխտոբ յայտարարեց, թէ Ս. Փերսպուրիլ այցելութեան ծիրէն ներս նախագահ Քոչարեան պարգեւատրուած է խումբ մը ռուս գործիչներ՝ 1988ին Սփիտակի երկրաշարժէն ետք անոնց ցուցաբերած աջակցութեան համար:

Ռուս պաշտօնատարը տեղեկացուց, որ Ռուսիա պատրաստ է մասնակցելու Լեոնային Ղարաբաղի տագնապի լուծման, եթէ պահանջուի անոր աջակցութիւնը: «Լեոնային Ղարաբաղի տագնապը Հայաստանի եւ Ազրպէյճանի քաղաքական երկխօսութեան հարց է, զոր մենք կը պաշտպանենք: Ի՞նչ չ'ափով, որ պահանջուի Ռուսիոյ օժանդակութիւնը, մենք պատրաստ ենք», նշեց Պրիխտոբ, աւելցնելով, որ այդ հարցը քննարկուած են նախագահներ Փութին եւ Քոչարեան: Արժարժուած է նաեւ վրաստանի ներկայ իրավիճակը:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՊԵՆՃԻՍ

Հայաստանի նախագահ Ռուպիլ Քոչարեան այսօր պիտի մեկնի Պեյճիք, աշխատանքային այցելութեամբ մը: Նախատեսուած են հանդիպումներ Պեյճիքայի, Երոպական Միութեան, Երոպական խորհուրդի եւ ՕԹԱՆի ղեկավարութեան հետ: Նախագահ Քոչարեան նաեւ պիտի տեսակցի տեղւոյն հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Թ-ԱԹ-Ա

ԼԻԲ